№ 71 ԿԻՐԱԿԻ ԱՊՐԻԼԻ 2

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԿԻՐԱԿԻ ԱՊՐԻԼԻ 2 № 71

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ռ., տասն ամսվանը՝ 9 ռ., ինն ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., եօթ և վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։ Ապրիլի 1-ից մինչև 1 յուլիսի 2 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բաղարնայա և Բարօնակայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գիտել հետևեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը

յայտնում է ի գիտութիւն անդամների, որ ապրիլի 6-ին, ցերեկվայ ժամը 12-ին, ընկերութեան արհեստանոցում կայանալու է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

(որը նշանակված էր մարտի 19-ին, բայց չը կայացաւ անդամների օրինական թիւ ներկայ չը լինելու պատճառով)

Ժողովի զբաղմունքի նիւթը հետևեալն է՝

1) Նախորդ 1905 թ. մարտի 27-ին կայացած ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը։
2) Վերատուղող յանձնաժողովի զեկուցումը։
3) Ընկերութեան դումարների հաշիւը վասն 1905 թ.։
4) Վարչութեան գործունէութեան հաշիւը վասն 1905 թ.։
5) 1906 թ. նախահաշուի ընթերցումը և հաստատումը։
6) Վարչութիւնից հերթով դուրս եկող 3 անդամի և 5 փոխանդամի ընտրութիւնը։
7) Վերատուղող յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխանդամի ընտրութիւնը։
8) Ընկերութեան ներկայ կանոնադրութիւնը փոփոխութեան ենթարկելու հարցը։

1—1

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Յեռեկվայ ներկայացում

Զորեքշաբթի, ապրիլի 5-ին

Հայոց Դրամատիկական խմբի դերասանները կը ներկայացնեն առաջին անգամ, նոր գրված ողբերգութիւն

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

5 գործ., հեղինակութիւն Վ. Տիրացեանի

Մասնակցում են տ. տ. Ստեփանեան, պ.պ. Աբէլեան, Պետրոսեան, Ստեփանեան, Միրաղեան, Աղայեան, Ադէլխանեան, Թաշճեան, Ռշտունի և ուրիշները։

Տեղերի գինը սովորական է։ Սկիզբն է ժամը 12½-ին։ Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Թատրոնի կասսայում։

(Կ.) 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գաղափարը կը յաղթանակէ. Զը յուսահատվինք. Վերջին տեղեկութիւններ։ Տեղեկութիւններ գաւառից. Նօվրուզի ապիթով. Դէպքերը Վրաստանում. Դասախօսութիւն բանուորական օրէնսդրութեան մասին. Մեր բաստիլները. Բագուի իրականութիւնից. Բուժուռավիայի զրկում են. Թատրոն և երաժշտութիւն. Նամակ Ալէքսանդրօպոլից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բրավոն փաշայի սպանութիւնը Թիւրքիոյ մէջ ըմբոստացում մը. Յուզմունքները Թիւրքիայում. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՐԱՍԻՐԱԿԱՆ. Ծագեց լոյսը։

ԳԱՂԱՓԱՐԸ ԿԸ ՅԱՂԹԱՆԱԿ

I

—Կը յաղթէ, անպատճառ կը յաղթէ։ Կը յաղթէ գաղափարը։

Մենք չենք կասկածում։

Միայն թէ մենք չընկճվենք, մենք չը պակասեցնենք մեր եռանդը և արիութիւնը այն մաքառումների մէջ, որ մենք մղում ենք տարիներ շարունակ։

Մաքառումները մեծ են, ծանր, ջլատող և սրտամաշ։ Բայց հաւատը դէպի ապագան, դէպի գաղափարի և արդար դատի յաղթանակը ուժեղ է մեր բոլորի մէջ։

Հազիւ մենք ազատվում էինք մի աղէտից և չարիքից, մեր առաջ բացվում էր մի ուրիշը և այդպէս տարիներ շարունակ։ Իսկ յետոյ միանգամից թափվեցին մեզ վրա մի քանի աղէտներ և արհաւիրքներ, սպառնալով մեզ ջարդուփշուր անել և փոշի դարձնել։

Մենք շարունակեցինք մեր մաքառումը, որ օրհասական կռուի բնաւորութիւն էր ստացել։

II

Արդարև մտաբերեցէք թէ ինչ անցաւ մեր գլխով և ինչ դրութեան մէջ ենք նոյնիսկ այսօր։

Մենք պատմութիւն չենք գրում և մանրամասնութիւններով չենք կարող այսօր զբաղվել։

Բայց գլխաւոր կէտերը կրակի և արիւնի տառերով գրոշմված են պատմութեան էջերում։

Մթթէ մեզնից որևէ մէկը կարող է մոռանալ այն սև և սարսուռ բերող օրերը, երբ գոյժ էր գալիս, որ հայ ժողովուրդը ընդմիշտ է լինում Թիւրքիայի ընդարձակ տարածութեան վրա։

Հարիւր հազար, երկու հարիւր հազար, նոյնիսկ երեք հարիւր հազար հայ զոհերի և վնասվածների մի առուելի թիւ էր յայտնագործվում աշխարհին։

Կարելի էր խելագարվել այդ սարսափելի և դժոխային լուրերից։ Եւ կովկասայոյը ուժգնապէս ցնցվեց ու զարհուրանքից սարսափեց։ Երկիրը և ժողովուրդը գնում էին ձեռքից։

Եւ, ոչ մի պաշտպան։

III

Ասացինք՝ ոչ մի պաշտպան։

Դա դեռ տանելի էր։

Բայց ինչ կասէք, երբ մենք տեսանք, որ բաւական չէ, որ ոչ մի պաշտպան չունէր Թիւրքահայ ժողովուրդը, այլ և բոլորը միացել էին նրան հալածելու մինչև վերջ և թոյլ չը տալու, որ նոյն իսկ գտնվի պաշտպանող, խնամող մի ոյժ։

Նրանք որոնք մեռան, կորան, գերի տարվեցին և բռնի հաւատափոխ եղան, դուրս եկան հաշուից. իսկ ով կարողացաւ փախչել և ազատվել գժոխքի սարսափներից, նա պատսպարվեց որևեցուրիշ երկիրներում՝ Կովկասում, Պարսկաստանում, Բալգարիայում, Եգիպտոսում, Ամերիկայում և ուրիշ տեղերում։

Ի՞նչ պէտք է անէինք մենք։

Մնում էր մի տխուր պարտականութիւն—խնամել թշուառներին, որբերին, տարագիրներին և թեթևացնել նրանց տանջանքներն ու զրկանքները։

IV

Հազիւ գաղթական հայը փոքր ինչ ուշքի եկաւ, հազիւ նա սկսեց ոտքի կանգնել, հազիւ մենք վերջացրինք մեր օգնութեան գործը, վրա հասաւ Կովկասում գաղթականներին դուրս քշելու կարգադրութիւնը։

Ո՞ւր գնացին։

Թիւրքիան նեռս չէը թողնում ոչ ոքի, իսկ կովկասեան իշխանութիւնը պահանջում էր դուրս գնալ երկրից։

—Փորձենք, ասացին գաղթականները։

Եւ փորձեցին։

Նորից մենք զբաղվեցինք օգնութեան գործով, նորից շարժվեց հասարակութիւնը դրական մի աշխոյժ ցոյց տալու ժողովուրդին։

Բայց սահմանը փակված էր։ Ոչ ոքին ներս չէին թողնում։ Իսկ նրանց, որոնք երկիր էին մտնում, գնդակահարում էին։

Պէտք էր նորից յետ դառնալ և սահմանագիծը մաքրել «անախորժ» գաղթական տարրից։

V

Այնուհետև սկսվեց ոչ միայն գաղթական, այլ և առհասարակ հայի դէմ մի հալածանք, որը միայն բաբելական սարսափների շարքում կարել էր դասել։

Ոչ հայ դպրոց, ոչ հայ հիմարկութիւն, ոչ հայ մամուլ, ոչ հայ եկեղեցական կալուածք, ոչ հայ ընկերութիւններ, ոչ հայ արդիւնագործութիւն, ոչ մի բան չը մնաց հալածանքներից դուրս։ Անխնայ կոիւ է յայտարարված հայութեան դէմ։

Աւելացրէք դրան, որ միևնոյն ժամանակ մտտեսական ճգնաժամը մաշում էր թէ Բագուի և թէ ամբողջ Անդրկովկասի քաղաքները, բազմաթիւ ձեռնարկութիւններ քայքայվում և կործանվում էին, աւերելով հազարաւոր աշխատողների տներ։

Աւելացրէք և հին ըէժիմի բռնութեան դագաթնակէտին հասնելը, որը ձգտում էր խեղդել ամեն մի լոյս, ամեն մի միտք և շարժում կեանքի մէջ։

VI

Եւ յանկարծ այդ բոլորի վրա աւելանում է մի արհաւիրք, որը իբրև մի սարտարոսական հրաբուղխ ժայթքեց մահաբեր լաւաներ իր շուրջը, սպառնալով սեացնել մեր բոլոր երկիրը։

Դա հայ-թուրքական արհաւիրքն էր, իր ժոխային բնաւորութեամբ։

Թէ ինչ էր այդ արհաւիրքը հայի համար, դա չափազանց սուր և անջնջելի հետքեր է թողել մեր մէջ և նրա կրակից չենք ազատվել նոյն իսկ այսօր։

Մենք զոհվեցինք, նահատակվեցինք, բայց մաքառեցինք։ Եւ այսօր, մենք մարդկային բազմաթիւ զոհերից ու միլիոնների կորուստներից յետոյ, դարձեալ կաղաղակենք։

Մեծ էր փորձութիւնը, մեծ էր դաւը մեր դէմ, սարսափելի՝ դժոխային կրակը՝ ուր այրվեցինք, բայց մենք վառել էինք չընկճվել, մաքառել և ասել աշխարհին.

—Մենք գաղափարի և կուլտուրայի աշխատաւորներ ենք։ Մեր դատը չի կորչի։ Գաղափարը կը յաղթանակէ։

Ա. Բալանթար

ՁԸ ՅՈՒՍԱՀԱՏՎԵՆԻ

Երկրորդ տարին է, որ հայութիւնը Կովկասում տօնում է Զատիկը, մարդկութեան Փրկչի Յարութեան օրը արտասուքի, պռաեն և կրակի մէջ։

Լինելու է սա վերջինը։ Կմ որևէ մի գրաւական, որ հայի տանջանքին, չարչարանքին, հալածանքին վերջ կը դրվի, որ Երօֆայեվները, Ֆրէյլիխները պէս գազան-ճիւռները կորպլուխ կը փախչեն և չեն յանդգնի այլևս գլուխ բարձրացնել։

Ե՞րբ պէտք է ծագէ մեր ժողովրդի համար իսկական ազատութեան յարութիւնը, Զատիկը։

Այո, անօրինակ է հաւաշխարհային պատմութեան մէջ այն վիճակը, որ բաժին է ընկել հայ ազգին. գուցէ նրան վիճակուից է միայն հրէական ազգը, որ սակայն ունի այն առաւելութիւնը, որ դեռ սպասում է Մեսիային։ Բայց հայի Մեսիան, որ նոյնն է և մարդկութեան Մեսիան, երեաց 1906 տարի առաջ և սակայն այդ Մեսիայի ազատարար գաղափարները չը կարողացան այնքան ազնուացնել, սրբել, մաքրել մարդին, որ Երօֆայեվների, Ֆրէյլիխների պէս գազան մարդիկ չարաւուրեն մարդկութեան անունը և նրա պատմութեան մէջ սև էջեր չաւելացնեն։

Բայց մթթէ ներկայ դառն և սոսկալի վիճակը պէտք է յուսահատեցնէ մեզ, հարերս, ներշնչէ այն համոզմունքը, թէ հեռու է փրկութիւնը, հեռու է ազատութեան արշալոյսը, այն օրը, երբ հայն ևս, իբրև ազատ քաղաքացի, ենթարկված կը լինի միայն արդար, անաչառ օրէնքների և ոչ մարդ-գազանների կամայականութեան։

Ոչ. և դրա ապացոյցը ինքն Փրկիչն է, որի Յարութիւնը այսօր տօնում ենք։ Յարութիւն առնելուց առաջ, Քրիստոս տանջվեց, չարչարվեց և մեռաւ։ Ամեն մի ժողովուրդ, բարոյապէս և հոգեպէս յարութիւն առնելու համար, վերածրենելու համար, պէտք է անցնէ տանջանքների, չարչարանքների բովից, որպէսզի դուրս գայ ամրացած, կոփուրված, զօրեղացած, թարմացած և վերանորոգված։

Հաւատանք, որ կը գայ և հայի իսկական Յարութիւնը, իսկական Զատիկը, որ նրա տանջանքները վերջ կը ստանան և նա կը նեռվի շուռով, իբրև ազատ քաղաքացի, խաղաղ կուլտուրական զարգացման և առաջադիմութեան շաւղի մէջ։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի Նպաստամատոյց յանձնաժողովի կողմից Երևանի Նահանգը ուղարկված յանձնաժողովի անդամ ազրօնամ Աւետիք Սահակեանը, մի հեռագիր ուղղելով յանձնաժողովի նախագահ Գարեգին արքեպիսկոպոսին, հետևեալ տեղեկութիւնները է հաղորդում։

«Գիւղական վնասվածներին նպաստ տալու համար Երևանի պ. Նահանգապետին ներկայացրած իմ ծրագիրը իրագործվելու է միայն մասամբ, միջոցների պակասութեան պատճառով։ Շարուր-Դարալագեազ գաւառի թալանված գիւղերին ուտեստի և սերմի համար պահեստի դրամագլխից կը տրվի, Նահանգապետի կարգադրութեան համաձայն, վաթսունևեօթը հազար բուբլի։ Վնասվածները, բացի դրանից, ապասվելու են հարկերից։ այստեղ խաղաղ է»։

—

Ղազախից «Кавк.»-ին գրում են. Թուրքական Շիխիա-Այրում, Բէյլաք—Ղշլաղ, Զիրքինի, Զաթաղ, Քիշնաղ, Գեչա, Բախալ գիւղերի և Բաշքենդի մասի հայ բնակիչների մէջ բոլոր նիւթական պահանջները վերջացրած են փոխադարձ համաձայնութեամբ և ներկայացված են հասարակական արձանագրութիւնները դրա առիթով։

—

Խաչիկ գիւղից Թորոս Պետրոսեանը գալիս է Ուլիանորաշէն գիւղը, որտեղ պատահելով Խաչիկ գիւղի տանուտէրին՝ գալիս է նրա հետ Եաշի գիւղը. այստեղից տանուտէրը ինքը անկարող լինելով ուղեկցել Պետրոսեանին, տալիս է նրան ուղեկից իր որդուն, որպէս զի գնան Խաչիկ գիւղը։ Եաշցի Թուրքերի բէկերը Աբաս բէկ և Իսմայիլ բէկ Վեքիլօվները ուղարկում են քալաթա Մահմուդին, քալաթա Զալալին և Հուսէյն Ղուլուն և մօլլի տղայ Հուսէյնին, որոնք ճանապարհին ոյժով խլում են Թորոս Պետրոսեանին, որին և սպանում են և գլուխը տանում Եաշի գիւղը, Վեքիլովներին ցոյց տալու համար։ Երբ մենք իմացանք այդ սպանութեան մասին և յայտնեցինք իշխանութեան, Եաշի գիւղը եկաւ գաւառապետի օգնականը 30 կազակներով և սկսեց ծեծել մի քանի Թուրքերի և պահանջել, որ տան չարագործներին, բայց այդ ժամանակ վրա են հասնում Վեքիլօվները և չեն թողնում, որ մի որ և է Թուրք կալանաւորվի։ Գործը այդպէս էլ մնում է մինչև այժմ։ Խեղճ Թորոս Պետրոսեանը թողել է մի կին և 5 փոքր զաւակներ, որոնց պահում է տեղական քահանան։ Աւել Թուրք գիւղում հաւաքվում են Շարուրից և այլ գիւղերից Թուրքեր և գալիս թալանում, տանում են Խաչիկ հայ գիւղից 67 հատ ոչխար և յետոյ գնում, զանգատում գաւառապետի օգնականին թէ խաչիկցիները թալանել են մեր ոչխարները։ Օգնականը 40 կազակներով գալիս է Խաչիկ, որ էկեղեցիա դնէ, բայց իմանալով եղելութիւնը վերադառնում է, իսկ հայերի ոչխարները մինչև այժմ չեն վերադարձած։

—

Դարալագեազ գաւառից մեզ գրում են. «Խաչիկ գիւղը, որ գտնվում է լինը Թուրք գիւղերի մէջ, ոչ մի տեղից և հայ գիւղերից օգնութիւն չունի, մինչև անգամ ճանապարհները բոլորը կապ, ոչ մի տեղից տեղեկութիւն չունենք. լուցկիի հատը 3 կոպէկով էլ չէ ճարվում, նմանապէս աղը, որ շատ դժուարանում ենք գտնելու։ Մինչև անգամ մեր հանդի հեռու տեղերը չենք կարողանում գնալ և արօրը վարել. աշնան ցանքը շատ սակաւ ենք ցանել. այնպէս որ 50 պուդ առաջացնողը, այս տարի 20 պ. հազիւ ցանել է։ 450 ոչխար մէկ անգամ են թալանել՝ 67 մի անգամ, 7 հատ ձի, 23 եզ, 11 էշ մարդիկ են սպանվել. սպանվածների դիակները չենք ստացել։»

—

Ախալցխայից մեզ գրում են. «Պետական Դուման ընտրութիւնների ներկայացուցիչների ժողովին մասնակցելու համար մեզանում թէ գաւառապետի և թէ քաղաքային վարչութեան կողմից առանձին տպագրված թերթիկներ են ցրվում ժողովրդին և յայտնում թէ ովքեր իրաւունք ունեն մասնակցելու այդ ընտրութիւններին։ Արդէն ընտրողների ցուցակը պատրաստ է և յանձնված ընտրութեան անձնաժողովին։ Ինչպէս յայտնի է, մեր Ախալցխայի գաւառից ընտրվելու են 4 ներկայացուցիչներ Թիֆլիսի Նահանգական ժողովին մասնակցելու համար։ Սրանցից մէկը լինելու է քաղաքի կողմից, մէկը կալուածատէրերի և երկուսը գիւղացիների կողմից։

—

«Тиф. Лист.»-ին հեռագրում են Դանձակից, որ «Միխայլովկա գիւղի տաւարը քշել տարել են, հետքերը հասնում են մինչև Ալագեօզ Թուրքական գիւղը։»

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

Հաղրութ, մարտի 22-ին։ Երէկ հեռագրեցինք ձեր և ուրիշ խմբագրութիւնների Ծողի ձորում կատարվող կամայականութիւնների մասին։ Այնտեղից մեզ հասնող լուրերը ազնցուցիչ են։

Դեռ 1905 թւի օգոստոս ամսի վերջերին էր, այգեկութի ժամանակը։ Թուրքական աւերից ազատ մնացած այգիները, ծանրաբեռնված սև ու խնկագոյն ճիթերով ի զուր սպասում էին քաղուողներին։ Ոչ ոք հնարաւորութիւն ու ժամանակ չունէր նրանց այցի գնալու։ Մարդիկ ամենայն ինչ մոռացութեան տուած մի ինչ որ անմիտ, հրէշաւոր գալիքի էին սպասում։ Այդ Թուրքական արշաւանքն էր, որ իր հրէշաւոր ուրականով գալիս օր օրի վրա մօտենում էր։ Սարսափահար ժողովուրդը ամբողջ օրերով տնային իրերն էր թաղցնում, կամ աւել ապահով տեղեր էր փոխադրում, որ բանը պէտք տեղը ընկնելուց կարողանայ փախչել, մի կերպ գլուխը ազատել։ Գիւղերները գիւղում տղամարդ չէր գտնվի. ամենը գիւղի շուրջը օղակ կապած, հայեացքները մթութեան անթափանցելի խորքին յառած, լսողութիւնները սրած սպասում էին Թուրքերի գալուն։

Եւ.... նա եկաւ։

Մենամարտող ըմբիշների նման իրար չափեցին ոտքից մինչև գլուխ, ուժերը փորձեցին։ Թուրքը այնքան ահաւոր չէր, որքան կարծվում էր։ Սիրտ առած հայը դուրս բերեց իր թաղցրած վերմակն ու բարձը, կաթսան ու ապէն, տուն տարաւ նրանց և սկսեց կամաց կամաց իր գործին կպչել, իր զզզած անտեսութիւնը կարկատել, կարգի բերել, յուսալով որ միջոցներ ձեռք առած՝ կառավարութիւնն էլ վերջնականապէս կապահովացնէ իր չարքաշ կեանքը։

Ցոյս... որքան լաւ բան է յոյսը։

Եւ հայ գիւղացին իր յուսալի հայեացքը դէպի կառավարութիւնը, դէպի օրէնքն ու արդարութիւնը յառած կարողանում էր հաւատալ, որ շուտով կը գտնէ կորցրած սովորական կեանքի թելի ծայրը։

Սակայն յոյսերը դաւանանեցին նրան։ Այսօր, բնութեան այս յարութեան օրում հայ գիւղացին նորից գլուխ կորցրած, նորից սարսափի մէջ ընկած, ընկած սար ու ձոր, իր կին ու աղջիկը, իր մօրն ու քրոջը, իր ունեցած չունեցածն է թաղցնում, իր գլխին մի մի ապահով տեղ է որոնում։ Բռնութիւն... ծեծ, կողոպուտ, բռնաբարութիւն, հրդեհ են թագաւորում այսօր Վարանդայի հայ գիւղերում։ Ո՞վ է այդ անողը, թիւրքը։ Ոչ, անողը քրիստոնեայ՝ բաշիբուզուկ կօզակներն են, հերոս գնդապետ Վիվերնի հրամանատարութեամբ։

Ի՞նչ է պատճառը, նրանք չեն ասի, միայն նա հասկանալի է...

**

ՆՕՎՐՈՒԶԻ ԱՌԻԹՈՎ

Ատրպատականի հայերը Նօվրուզի առիթով հետևեալ հեռագիրն են ուղղել Իրանի Նահրնշահին

Թէհրան

Նորին Վսեմափայլութեան Աթաբէկ Ամարատ Մի՛ջոցով առ ոտս արքայական գահոյից Արեգակնափայլ Շահն-շահի

Նոր Տարու և ազգային տօնի առիթով Ատրպատականի համայն հայ ազգը, աղօթատեղիներում ի մի խմբված, միահամուռ իր սրտաբուղխ ու ջերմագին աղօթքները ուղղելով առ ամենաբարձրեալն Աստուած, Նորին Վեհափառութեան սրբազան անձին ու թանկագին կենաց գոյութիւնը հայցելով՝ բարեմաղթում է որ Նորին Վեհափառութեան համապիւռ գթութիւնն ու համատարած շնորհները, ընդհանրապէս համայն մարդկութեան ու մասնաւորապէս Ատրպատականի հայ ազգի վրա մշտասև ու հաստատուն լինի և Նորին Վեհափառ Շահնշահն անձնառողջութեամբ, փառօք և երջանկութեամբ հազարաւոր այսպիսի տօներին հասնէ։

Մնամ խոնարհ աղօթարար՝

Մկրտիչ քահանայ, տեղապահ Ատրպատականի հայոց առաջնորդի։

Թաւրիզ 10 մարտի 1906 թ.

29 Մուհառամ 1324 թ.

—

Փոխարէն ստացվել է Մադր-Ազամից հետեւեալ պատասխանը.

Թաւրիզ

Քրիստոսանուէր գիտնականներից մեծին, Յիսուսին հետևող խելացիների գիտունին, տէր Մկրտիչ քահանային, Ատրպատականի հայոց առաջնորդական տեղապահին

Նոր Տարու առիթով ձեր անկեղծ զգացմունքներով լի շնորհաւորական հեռագիր-խնդրագիրը, որն ուղղված էր Նորին Վեհափառութեան մեծագոր արքայ Շահնշահին (որին մատաղ լինի հոգիներս) և որը ծանուցանում և արտայայտում էր ձեր բարի դիտաւորութիւնները և բարեմաղթութիւնները հանդերձ Ատրպատականի պատուարժան հայ ժողովրդի աղօթատներում միահամուռ մատուցած ջերմագին աղօթքով և մաղթանքներով վասն Արքայական անդին կենաց և սուրբ անձին Նորին, հեռագրելով յոտս գահոյից Նորին սուրբ Վեհափառութեան իր խորին և ծոմանման գոհունակութիւնը և ուրախութիւնը յայտնեց, բարեհաճեց ձեր և համայն պատուարժան հայ ազգի որպիսութիւնը հարցնել և հրամայեց, որ քաջայոյս է, որ այս բարձր և յարգելի ազգը, կամօքն Աստուծոյ իր հոգևանուրութեան ներքոյ և այս պետութեան գոյութեամբ, պիտի լինի ապահով, խաղաղ և անդորր վիճակի մէջ և պիտի վայելէ նաև այս Նոր Տարու բարելից և երջանիկ օրերը։

Սուլթան Աբդուլ Մաջիդ (ներկայ Աթաբէկ-ազամն)

Թէհրան, 6 սաֆարի 1324 թ.

(17 մարտ 1906 թ.)

ԴԷՊԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

—

Գիներալ-մայոր Ալիխանովը հաղորդում է, որ այս վերջին 1½ ամսվայ ընթացքում Բուքայիսի նահանգում չէ այրվել և ոչ մի տնակ զինուորների մեղաւորութեան պատճառով։ Ուստի այդ առիթով յարուցված գանգատները և մեղադրանքները զօրքի դէմ չարատեսութեամբ հնարել են կառավարութեան թշնամի տարրերը, որոնք ցանկանում են այդպիսով բոլոր գծբաղդութիւնների մեղաւորութիւնը բարդել զօրքի վրա և նրանց պատասխանատուութեան ենթարկել Բուքայիսի նահանգում կատարված բոլոր հրդեհների և յափշտակութիւնների համար։

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

—

Հինգշաբթի, մարտի 30-ին, Պ. Կարա-Մուրզա Արտիստական ընկերութեան դահլիճում կարդաց մի դասախօսութիւն՝ բանուորական օրէնսդրութեան մասին։

Դասախօսը պարզաբանեց բանուորական օրէնսդրութեան հիմնական կէտերը և այն առաջադիմութիւնը, որ նա արել է եւրօպական երկիրներում։ Այդ օրէնսդրութեան զարգացումը ընթացել է բանուորական հարցի զարգացման հետ միասին, նակայն միատեսակ աջողութեամբ չէ պակվել բոլոր երկիրներում։

Ռուսաստանում բանուորական օրէնսդրութիւնը շատ ուշ է ստացել դրական լուծում և եղածը կարօտ է մեծ բարեփոխութիւնների։

Ռուսական պարլամենտի վրա ծանրանում է պատասխանատուութիւն առաջ մղելու այդ հերթական և չափազանց կարևոր խնդիրը։ Քաղաքական կուսակցութիւնները դրել են այդ հարցը իրանց ծրագիրների մէջ, բայց զանազան ամփոփով։ Սամամանդիր-ռամկավարական կուսակցութիւնը մտցրել է իր ծրագրի մէջ այն բոլոր էական կէտերը, որոնց նա յոյս ունի իրագործել մերձաւոր ապագայում։

Դասախօսութիւնից յետոյ տեղի ունեցան մեծ վիճաբանութիւններ, որոնք վերաբերում էին թէ բանուորական հարցին և թէ սահմանադիր-ռամկավար կուսակցութեան ընդհանրապէս։ Վիճաբանութիւններին մասնակցեցին շատ անձեր և շօշափվեցին Կովկասեան կուսակցութիւններից մի քանիսի բռնած դիրքերը բանուորական հարցում։

ՄԵՐ ԲԱՍՏԻՑՆԵՐԸ

—

Վերջին ամիսներում մեր գրականութիւնը շատ զբաղվեց Շլիսելբուրգի բանտով ու նրա մէջ տառապող կալանաւորներով։ Ռուս հասարակութիւնը մեծ հետաքրքրութեամբ էր ծանօթանում այն խկապէս սոսկալի պայմանների հետ, որոնց մէջ ապրում էին այդ ամրոցում բանտարկվածները ոչ միայն հին, հեռաւոր անցեալում, այլ և մեզնից շատ մօտիկ ժամանակներում։

Ռուս հասարակութեան ընդարձակ խաւերը միայն հիմա առաջին անգամ հնարաւորութիւն ստացան ծանօթանալու այն բոլորի հետ, ինչ որ կատարվում էր Շլիսելբուրգի հատ ու հատատուն պատերի յետևում։ Մինչև վերջին ժամանակները անհնարին էր մի խօսք անդամ ասել, թէ ինչ էր կատարվում Շլիսելբուրգի մռայլ խցիկներում։

Բայց Շլիսելբուրգի ամրոցը ռուս կառավարութեան միակ Բաստիլը չէր։ Շլիսելբուրգից զատ միապետական բիւրօկրատիայի տրամադրութեան տակ կային դեռ էլի մի շարք բերդեր, ամրոցներ և այսպէս կոչված կենտրոնական բանտեր, ուր փակվում էին բոլոր անհանգիստ մարդիկ, որոնք չէին հաշտվում այն անամօթ կամայականութեան, անսահման բրոնապետութեան հետ, որ ամբողջապէս թագաւորում էին Ռուսաստանում։

Եւ, ի հարկ է, այդ բոլոր բերդերի ու ամրոցների մէջ առաջին տեղը պատկանում է հռչակաւոր «Պետրոպաւլովկային»։ Ռուսաց բանտերի յայտնի հետազօտող Ջորջ Քենանը այդ բերդին նուիրված իր յօդուածը այսպէս է սկսում։

«Ամենամեծ պատմական բանտը Ռուսաստանում, ուր վաղ կամ ուշ բանտարկվում են բոլոր կարևոր և ամենավտանգաւոր «քաղաքական յանցաւորները», Պետրոպաւլովսկի բերդն է։ Ով եղել է Պետերբուրգում, անշուշտ տեսել է ոսկեգօծ բարձր ձողը, որ Նեվայի հարթ ափերի մակերևոյթից 400 կանգուն վեր է բարձրանում, ճիշտ ձմեռային պալատի դիմացը։ Պետրոպաւլովսկի մայր եկեղեցու զանգակատան վրայի ձողն է, և այդ եկեղեցումն են հաչում ռուսաց թագաւորների նշխարները, իսկ նրա չորս կողմը, համարեա թէ նոյն խորութեան վրա, տանջվում են ինքնակալութեան թշնամիները»։

Անշուշտ, Ռուսաստանի ազատագրական շարժման գործում Պետրոպաւլովսկի բերդը աւելի տխուր, աւելի արիւնալի դեր է կատարել, քան Շլիսելբուրգը։

Այդ դժուար չէ ապացուցանել։

Ամեն մի քաղաքական շարժում, որ սկսվել է ռուս հասարակութեան մէջ, միշտ վերջացել է Պետրոպաւլովսկի բերդի խցիկներով։ Այդպէս է եղել անցեալում, այդպէս է, դժբախտաբար և հիմա։ Յեղափոխական շարժումը, որ համարեա թէ հարիւր տարի առաջ բարձրացրին դեկաբրիստները, ինչպէս յայտնի է, նոյն ճակատագիրը ունեցաւ։ 1825 թ. դեկտեմբերի 14-ը պատրաստող գաղտնի ընկերութիւնների բոլոր գլխաւոր ու ամենականաւոր մասնակիցները բանտարկված էին Պետրոպաւլովսկի բերդում։

Այդտեղ էին նստել Բիլէեվը, Պիստելը,

Սերգէյ Մուրավեվ-Ապոստոլը, Բեստիժեվ—Ռիւմինը, Կախովսկին, իշխաններ՝ Տրուբեցկոյ, Վոլկոնսկի, Օբոլենսկի, Բարատինսկի, Օդոեվսկի, յետոյ՝ Մուրավեվները, Բիստուժեվները, Եակուշկինը, Եակուբովիչը, Բատենկովը, բարոն Բոդէնը, Բասարգինը, Ֆոն-Վիզինը, Անենկովը և շատ ու շատ ուրիշները։

Այս յիշածներից հինգի համար Պետրոպաւլովսկի բերդը, ինչպէս յայտնի է, գերեզման եղաւ կամ աւելի ճիշտ է ասել, կախաղան և մահվան պատժի վայր եղաւ. 1826 թ. յուլիսի 13-ի վաղ առաւօտեան նրանց կախեցին այդ բերդի պատի վրայ...

—Այդ հինգ կախաղանները մեզ համար հինգ խաչափայտեր եղան, ասում էր յետոյ Հէրցէնը այդ մահվան պատժի առիթով։

Դեկաբրիստների գործով ընդամենը ձերբակալված էին մօտ 500 մարդ, որոնցից 121-ը յանձնված էին բարձրագոյն եղեռնական ատեանին։ Շլիսելբուրգի բերդում դեկաբրիստներից համեմատաբար շատ քչերն էին բանտարկվել, այն է՝ Դօվիթ Պօջիո, Ա. Իշնեվսկի, Պուշչին, Գրիբով, Պիստով և Անդրէեվիչ։ Յետոյ արդէն դատարանից վերջը այդտեղ մի ա ժամանակ պահվում էին Նիկոլա և Միխայիլ Բեստուժէվները։

Նոյն դերն է խաղում Պետրոպաւլովսկի բերդը և մեր օրերում, հէնց հիմա, այս րոպէիս էլ։ Դեռ անցեալ տարի, արիւնալի յունվար 9-ից յետոյ, նա լցված էր բանտարկածներով։ Ի միջի այլոց, ինչպէս յայտնի է, այնտեղ էին նետվել այն պատգամաւորութեան բոլոր անդամները, որը յունվար 9-ի նախօրեակին գնացել էր ներքին գործերի մինիստրի և մինիստրների կոմիտէի նախագահի մօտ, որպէս զի նախազգուշացնէր կառավարութեանը, թէ միւս օրը բանւորական խաղաղ ցոյց պէտք է կատարվի, և որ խնդրում էր կառավարութիւնից, միջոցներ ձեռք առնել, որպէս զի ժողովրդի, ոստիկանութեան և զօրքի մէջ ընդհարումներ տեղի չունենան։

Այդ ժամանակ Պետրոպաւլովսկի բերդը նեռվածներն էին. պրոֆեսորներ Վ. Ի. Մեմլենի և Ն. Ֆ. Ստեֆանսկի, Ի. Վ. Հեսսեն, Մակսիմ Գորկի, Ա. Վ. Պեշեխոնով, Վ. Ա. Մակարենկո, յայտնի քաղաքային գործիչ Ե. Ի. Կեդրին, բանւոր Կուզին և շատ ուրիշներ։

Վերջապէս հէնց այս րոպէիս էլ, երբ գրվում են այս տողերը, Պետրոպաւլովսկի բերդի խցիկները լցված են բանտարկեալներով, որոնց մասին յաճախ գրված է վերջին ժամանակներս լրագրներում։ Ի միջի այլոց, ինչպէս յայտնի է, այնտեղ նստած են այս րոպէին, խորհրդի նախագահ պ. Նօսար-Խրուստալեվը, յայտնի էմիգրանտ Լէվ Դեյչը, «16 տարի Սիբիրում» գրքի հեղինակը, որ թարգմանվել է բոլոր եւրոպական լեզուներով, «բանւոր ժողովուրդ» (работій народъ) թերթի խմբագիր Վ. Վ. Կիրեակովը և շատ ուրիշներ։

Ինչ վերաբերում է Պետրոպաւլովսկի բերդի հեռաւոր անցեալին, նա, ի հարկէ, աւելի մաշ և արիւնալի է։

Ահա թէ, օրինակի համար, ինչ է ասում այդ բերդի անցեալի մասին յայտնի ռուս գիտնական և անարխիզմի թէօրիագէտ իշխան պ. Կրոպոտկինը, որը անձամբ իր կաշուի վրա փորձել է բերդում միայնակ բանտարկութեան տառապանքները, մօտ երեք տարի Պետրոպաւլովսկի խցիկներում նստելով։

«Այստեղ Պետրոս Ա-ը տանջանքների էր ենթարկում իր որդի Ալեքսէյին և իր ձեռքով սպանեց նրան։ Այստեղ, այս խցիկում էր բանտարկված իշխանուհի Տարականովան, երբ հեղեղաջուր ժամանակ սկսվեց ջուր լցվել։ Մէկները, ջրհեղեղից փախչելով, նստեց հագուստի վրա։ Էին բարձրանում։ Այստեղ դաժան Մենիխը իր քաղաքական հակառակորդներին տանջանքների էր ենթարկում, իսկ Եկատերինա II-ը կենդանի-կենդանի թաղեց նրանց, որոնք վրդովվում էին նրա ամուսնու սպանութեան դէմ...

«Եւ Պետրոս Ա-ի ժամանակներից ի վեր, ամբողջ հարիւր եօթանասուն տարվայ ընթացքում, այս քարէ հսկայի ժամանակագիրները, որ բարձրանում է Նեվայի միջից ձը-մեռնային պալատի դիմացը—խօսում են միայն սպանութիւնների, տանջանքների, կենդանի թաղվածների, կամաց-կամաց մահանալու դատապարտվածների, կամ թէ չէ մըռայլ ու խոնաւ խցիկներում մեկնակի բանտարկութեամբ խելագարութեան հասցնելու մասին»։

Դժբաղդ իշխանուհի Տարականովայի մասին յիշատակելով, իշխան Կրոպոտկինը ոչինչ չէ ասում նրա գեղեցիկ ճակատագրի մասին, որովհետև բանը դպիլուց յետոյ գժբաղդ իշխանուհու մեղքը խորին զղջանքով է ծածկված։ Յայտնի ժողովրդական լեգենդայի ասելով, իշխանուհի Տարականովան ուներ «քաղաքական նպատակներ» են նկատվել, ամեն կարգի ու տեսակի յեղափոխականներ, սկսած ամենախաղաղ պրօպագանդիստներից մինչև տեռորի կողմնակիցները, զրկված պրօտեստարիատի մարտիկները, բանւորները և, վերջապէս, վաճառուն երիտասարդութեան ներկայացուցիչները, որոնք միշտ պատրաստ են ամեն բան զոհել յանուն գաղափարի։

(Բեպ)

ԲԱԳՈՒԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

IV

Մարտի 28-ին

Բագուի լրագիրներում տպագրված է Մարդասիրական ընկերութեան հետեւեալ յայտարարութիւնը.

«Բագուի հայոց Մարդասիրական ընկերութեան Վարչութիւնը որոշած լինելով պատրաստել և ներկայացնել Ընդհանուր Ժողովին մանրամասն զեկուցում «Աշխատանքի Տան» մասին, և միաժամանակ առաջարկել բոլորովին նոր կազմակերպութիւն այդ գործի, խնդրում է այն բոլոր անձանց, որոնք ցանկանում են և կարող են «Աշխատանքի Տան» մասին որ և է առաջարկութիւն անել Վարչութեանը, շտապել ներկայացնելու իրանց կարծիքները Վարչութեանս, ոչ ուշ քան 15 ապրիլի, որպէս զի Վարչութիւնը ինքը կարողանայ ժամանակին պատրաստել իր զեկուցումը»։

«Ծանօթութիւն.—Աչքի առաջ ունենալով, ի միջի այլոց, հասատաւել «Աշխատանքի Տան» մէջ մի քանի արհեստանոց-ուսումնարաններ, ընկերութեան Վարչութիւնը ցանկութիւն է յայտնում իմանալ այդ բանի մասին, թէ արհեստների որ ճիւղերը պէտք է ուսանվեն այդ ուսումնարաններում»։

Պարոններ, ինչ ուզում էք արեցէք, ինչպիսի ձև ուզում էք տուէք «Աշխատանքի Տանը», նա միշտ նեթական վատ է տալու, իսկ բարոյական օգուտ չէ տալու, քանի որ ընկերութեան գլուխ անցած կը լինին այնպիսի մարդիկ, ինչպիսին որ մինչև այժմ եղել են և կան, որոնք մի անգամ չեն մտնում «Աշխատանքի Տանը» տեսնելու թէ ինչ է կատարվում այնտեղ, որոնք երբէք չեն սուսգում «Աշխատանքի Տան» հաշիւների ճշտութիւնը, որոնց աչքերի առաջ «Աշխատանքի Տան» ապրիլիսարացիան 2400 զոյգ չուտին 1275 ր. ՝ցաս է ցոյց տալիս, որոնք տեսնում են թէ ինչպէս «Աշխատանքի Տան» կառավարչը և օգնականը հէնին պատրուակով 5—10 տարեկան երեխաներին ամբողջ ժամերով սառը սարայատակի վրա չոքացնում են, կամ խոնաւ նկուղներում փակելով ամբողջ օրը քաղցած պահում, որոնք գիտեն, որ «Աշխատանքի Տան» ապրիլիսարացիան ծեծի է ենթարկում մանուկներին, որի առաջ կը նստեմանայ նոյն իսկ Տէր-Թէոդիկի հռչակաւոր ֆալախկան, որոնք, իբր թէ մուրացկանութիւնը արմատախիլ անելու նպատակով դիմում են Բագուի հասարակութեանը, որպէս զի ազքատներին փող չը տան, այլ թէ փողը և թէ իրանց դիմում աղքատներին ուղարկին ընկերութեան գրասենեակը և յետոյ 5—6 հոգուց բաղկացած ընտանիքին ապրելու նըպատաս են տալիս 3—5 բուբլի, շատ լաւ իմանալով, որ դրանով ապրել չէ կարելի, որոնց Վարչութեան փոխ-նախագահուհին, նպաստ խնդրող չքաւոր կնոջ երեսին հետեւեալ խօսքերն է շարում՝ «եթէ ապրելու միջոց չունէք, ինչու էք այդքան երեխաներ բերում» և որոնք անուսումնասէր ազքատներին մերժում են ընակարան տալու ընկերութեան անունը, իսկ կարմրաթուշ պարոնների և թեթև վարքի տէր կանանց տալիս են. և վերջապէս որոնք այս բոլորը անում են, տեսնում են, գիտեն... և լռում են։

Ուրեմն ինչ կարելի է սպասել նրանցից։

Վ. Թումանեան

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻՆ ԶՐԿՈՒՄ ԵՆ

Պատմական անհերքելի իրողութիւն է որ դէն, որ ֆրանսական մեծ յեղափոխութիւնից սկսած մինչև վերջին օրերս կատարվող յեղափոխութիւնները բուրժուական են եղել։ Նախկին ազնուական հողատիրութեանը յաղթել ֆէոդալական կարգերի օրով, երբ հետզհետէ զարգացաւ խոշոր արդիւնաբերութիւնն ու վաճառականութիւնը և բուրժուազիան տեսաւ, որ ֆէոդալական կարգերը այլևս կաշկանդում են իր գործունէութիւնը, խոչընդոտ են հանդիսանում իր արդիւնաբերութեանը աւելի մեծ ծաւալ ստանալուն, միւս կողմից՝ երբ նա-բուրժուազիան տեսաւ, որ ամբողջ երկիրը իրապես իր փողով է կառավարվում, մինչդեռ հողատէր ազնուականները, փող չունենալով և կառավարելուս անհանգամատ լինելով հանդերձ, դեռ շարունակում են ուանդաբար երկրի տէրերը, նրա կառավարիչները, օրէնքներ մշակող ու սահմանողները լինել, օրէնքներ, որ միշտ բնականաբար լինում էին ի վնաս բուրժուազիայի և յօգուտ հողատէր ազնուականութեան շահերի, կրկնում ենք, այս բոլոր ՝ավաշկարա անարդարութիւնները և անտրամաբանութիւնները տեսնելով, բուրժուազիան ոտքի կանգնեց և, իր հետ միացնելով ազնուականութիւնից զժգոհ միւս տարրերին կամ դասակարգերին, յեղափոխութեան միջոցով տապալից նախկին ֆէոդալական կարգերը և նրանց տեղ հաստատեց նորերը. ճիշտ այն, ինչ որ մենք այսօր տեսնում ենք ամբողջ Եւրոպայում և Ամերիկայում։ Բուրժուազիան այդպէս բռնի ոյժով խորտակեց ազնուականութեան թագաւորութիւնը և նրա տեղ իր թագաւորութիւնը հաստատեց։ Եւ այն երկիրները, որտեղ կառավարութեան դեկը բուրժուազիայի ձեռքը անցաւ, սկսան արագութեամբ զարգանալ, հարստանալ, զօրեղանալ և հսկայական քայլերով առաջադիմել, այնինչ միւս երկիրները, ուր թագաւորը ազնուականութիւնն էր մնացել իր միջնադարեան բոլոր ֆէոդալական կարգերով, չը կարողացան ոչ զարգանալ, ոչ հարստանալ և ոչ առաջադիմել։

Այս վերջին կարգի երկրներից մէկն էլ Ռուսաստանն է, որը մինչև վաթսունական թուականները դեռ շարունակում էր իր հին անդորը կեանքով ու ֆէոդալական կարգերով ապրել։ Պէտք է ասել՝ որ մինչ այդ ժամանակները գարգացած արդիւնագործութիւն և բուրժուազա էլ չը կար Ռուսաստանում, որպէսզի կարգերի փոփոխութեան պահանջ էլ զգացվէր։ Բայց և այնպէս Ղրիմի պատերազմից յետոյ Ռուսաստանի ազնուականութիւնը և բարձր իշխանութիւնը յանկարծ սթափվեցին ու նկատեցին, թէ որ ասոիճան իրանց երկիրը յետ է մնացել եւրոպական երկրներից և ժամանակի տիպղոդական պահանջներից։ Նրանք սկսեցին այդ պահանջների մասին մտածել և միջոցներ որոնել, որպէսզի Ռուսաստանն էլ արագութեամբ զարգանայ ու առաջադիմէ Եւրոպական երկրների նման։ Բայց որովհետև, ինչպէս ասացինք, այդ ժամանակներում զարգացած բուրժուազիա չը կար Ռուսաստանում և բարենորոգումների մասին մտածողն ու գործողը ազնուականութիւնն ու բարձր իշխանութիւնն էին, ուստի չէր էլ կարելի սպասել, որ այդ բարենորոգումները հիմնաւոր և արմատական բաներ լինէին. ազնուականութիւնը չէր էլ կարող ինքնայօժար ու ինքնակամ կերպով մի անգամից խորտակել այն բոլոր օրէնքներն ու կարգերը, որոնք իր դարաւոր թագաւորութեան հիմնաքարերն էին կազմում։ Աւելին կասենք՝ բարենորոգումները մշակելիս ազնուականութիւնը դարձեալ իր շահերի մասին էր մտածում և իր շահերի տեսակէտով էր նայում խնդրի վրա։ Նա ցանկանում էր, որ արդիւնագործութիւնն ու կապիտալը զարգանան երկրում, որպէսզի կառավարութիւնն էլ կարողանայ հարստանալ այդ կապիտալի հաշվին։ Բայց ով էր կառավարութիւնը, եթէ ոչ մեծ մասամբ նոյն ազնուականներից դուրս եկած բիւրոկրատիան ու զանազան կարգի չինովնիկները։ Բացի դրանից՝ նրանք մտածում էին, որ կառավարութիւնը հարստանալով, կարող է իրանց—այդ պատճառով ազնուական ցեղին, զանազան դրամական սուբսիդիաներ տալ, իրանց քայքայված տընտեսական դրութիւնը կարգի բերելու համար։ Մի խօսքով՝ այն ժամանակվայ ազնուականութիւնը ոչ թէ մտածում էր ճահիճը մի անգամից մաքրել, այլ միայն, նրա մէջ մի փոքրիկ առուակով ջուր մտցնելով, նրան թարմ պահել, որպէսզի շատ չը հոտի։

Այսպէս էր վաթսունական թուականներին։ Այդ ժամանակներից ի վեր անցաւ մի ամբողջ կէս դար։ Ի հարկէ, կէս դարի ընթացքում շատ բան փոխվեց Ռուսաստանում. առհգին քայլերով զարգացաւ արդիւնագործութիւնն և կապիտալը, զարգացաւ բուրժուազիան և պրոլետարիատը, դրա հետ զուգընթաց աւելի ու աւելի քայքայվեց ազնուականների և գիւղացիների տնտեսութիւնը։ Մինչ բանը որ չը փոխվեց Ռուսաստանում—դա բիւրոկրատիան էր և իր կաշկանդող ու աւերող ոեժիմը։ Ճահիճը ոչ միայն չը փոխվեց ու չը թարմացաւ, այլ և աւելի մեծացաւ ու հոտեց։ Եւ այդ հոտը էր բոլորը գարշելութեամբ երևան եկաւ վերջին ռուս-եապօնական պատերազմի ժամանակ։ Այդ զգաց և ինքը ազնուականութիւնը և ինքը բիւրոկրատիան։ Բայց ամենից աւելի այդ զգացին, ի հարկէ, միւս դասակարգերը, որոնք ճիչ ու աղաղակ բարձրացրին, պահանջելով ազնուական բիւրոկրատիայից՝ հեռանալ կառավարչական ասպարէզից և իրանց տեղը միւս դասակարգերին կամ, աւելի ճիշտ է ասել, բուրժուազիային տալ։ Այդ ճիչ ու աղաղակից սարսափած, բիւրոկրատիան դէմքը ծռմռեց և այնպիսի կերպարանք ցոյց տուեց, թէ ինքը պատրաստ է զիջողութիւններ անելու, միայն մեն կողմ և Յարութիւն, Զատիկ է քարոզում. ամենահեռաւոր փոսնգ անգամ ոչ մի կողմից չէ սպառնում։

Բայց վտանգը աւելի մօտ էր, քան Վանէս ապերը կարծում էր. նա իր կողքին էր, իր առաջը, իր օջախի մէջ։

Նա լսեց ոռնաքայլ և աչքերը բարձրացնելով, տեսաւ իր առաջ կանգնած իր երկու զաւակներին, իր օջախի սիւներին—Յովհաննէսին և Արամին։

Նրանք մօտեցան պատկառանքով, համբուրեցին ձեռը և նստեցին մօտը, գետնի վրա։

Վանէս ապերը զգաց, որ սիրտը ճմլվում է, զգաց որ դժբախտութիւնը պայթելու է։

—Հայր, սկսեց Յովհաննէսը, ես և Արամը եկանք յայտնելու, որ Զատկից յետոյ որոշել ենք գնալ Բագու և յետոյ քեզ էլ ու ամբողջ տունը տեղափոխել այնտեղ։

Վանէս ապերը սկզբում չը հասկացաւ և մնաց շշմած, աչքերը չռած։

—Բագու, ինչի համար, ինչ է պատահել։

—Այժմ ամենքը Բագու են գնում. այնտեղ կարելի է հարստանալ, մեծ փող աշխատել, ասում են, միլիոնատէր դառնալ։

—Ինչպէս, մի՞թէ այնտեղ այդքան շատ հող կայ. բայց եթէ լինի էլ, մի՞թէ մենք այստեղ քիչ հող ունենք, մի՞թէ մենք այստեղ աղքատ ենք. փառք աստծու, մեր հալալ աշխատանքի համար Աստուած մեզի հարիւր է տալիս մեզ։

—Ոչ, հայր, այնտեղ հող չը կայ. այնտեղ չը պէտք է հող հերկել, սերմանել, ոչխար պահել, այգի ձգել. այնտեղ նաւթ կայ և այդ նաւթը միլիոններ է տալիս։

—Բայց մեր ինչին է պէտք փողը. մի՞թէ այստեղ ամեն բան չունենք, մի՞թէ մեր օջախը շէն չէ և առատ։

—Մենք ամեն բան ունենք հայր, բայց փող չունենք։ Մենք հող ունենք, ոչխար, դաշտ այգի, բայց դա փող չէ։

—Լաւ, ինչի՞ է պէտք փող, երբ ամեն բան կայ. փողը միայն ձեռքի կեղտ է։

—Ոչ, հայր, փողը այժմ ամեն բան է. այժը նրա մէջ է։ Եթէ մենք ծախենք մեր հողերը, մեր այգիները, մեր աշխատը և փող գտնենք ու այդ փողով Բագուում գործ սկսենք, մի քանի տարում անգին հարստութիւն կը գտնենք։ Շատերը այդպէս են արել և ասում են շատ մեծ աշխատութիւն են գտել։

Ծերունին հասկացաւ, թէ ինչու սիրտը յանկարծ ճմլվել էր. նա զգաց, որ դժբախտութիւնը եկել չոքել է իր դռան առաջ, նա զգաց, որ իր որդիների վճիռը անդառնալի է։

Երկար նա մտածեց, գլուխը կրծքին քաշ գցած պրտասանեց.

—Ես ձեզ չեմ արգելում, որդիք, գնալ Բագու ձեր ընտանիքների հետ, բայց ես և ձեր մայրը այստեղ կը մնանք. այստեղ ծնվել ենք, այստեղ էլ կը մեռնենք. իսկ հողերը, դաշտերը, այգիները, հայրենի օջախը, տունը կարող էք ծախել միայն մեր մահից յետոյ։ Աստուած տայ, որ չը փոշմանէք։ Առաջ թիմուրները, Զինգիզխանն էին կրծանում մեր տուն տեղը, մեր օջախը, մեր հայրենիքը, այժմ մենք ինքներս մեր ձեռներով ենք կամենում այդ անել։

Սերգէյ Մուրավեվ-Ապոստոլը, Բեստիժեվ—Ռիւմինը, Կախովսկին, իշխաններ՝ Տրուբեցկոյ, Վոլկոնսկի, Օբոլենսկի, Բարատինսկի, Օդոեվսկի, յետոյ՝ Մուրավեվները, Բիստուժեվները, Եակուշկինը, Եակուբովիչը, Բատենկովը, բարոն Բոդէնը, Բասարգինը, Ֆոն-Վիզինը, Անենկովը և շատ ու շատ ուրիշները։

Այս յիշածներից հինգի համար Պետրոպաւլովսկի բերդը, ինչպէս յայտնի է, գերեզման եղաւ կամ աւելի ճիշտ է ասել, կախաղան և մահվան պատժի վայր եղաւ. 1826 թ. յուլիսի 13-ի վաղ առաւօտեան նրանց կախեցին այդ բերդի պատի վրա...

—Այդ հինգ կախաղանները մեզ համար հինգ խաչափայտեր եղան, ասում էր յետոյ Հէրցէնը այդ մահվան պատժի առիթով։

Դեկաբրիստների գործով ընդամենը ձերբակալված էին մօտ 500 մարդ, որոնցից 121-ը յանձնված էին բարձրագոյն եղեռնական ատեանին։ Շլիսելբուրգի բերդում դեկաբրիստներից համեմատաբար շատ քչերն էին բանտարկվել, այն է՝ Դօվիթ Պօջիո, Ա. Իշնեվսկի, Պուշչին, Գրիբով, Պիստով և Անդրէեվիչ։ Յետոյ արդէն դատարանից վերջը այդտեղ մի ա ժամանակ պահվում էին Նիկոլա և Միխայիլ Բեստուժէվները։

Նոյն դերն է խաղում Պետրոպաւլովսկի բերդը և մեր օրերում, հէնց հիմա, այս րոպէիս էլ։ Դեռ անցեալ տարի, արիւնալի յունվար 9-ից յետոյ, նա լցված էր բանտարկածներով։ Ի միջի այլոց, ինչպէս յայտնի է, այնտեղ էին նետվել այն պատգամաւորութեան բոլոր անդամները, որը յունվար 9-ի նախօրեակին գնացել էր ներքին գործերի մինիստրի և մինիստրների կոմիտէի նախագահի մօտ, որպէս զի նախազգուշացնէր կառավարութեանը, թէ միւս օրը բանւորական խաղաղ ցոյց պէտք է կատարվի, և որ խնդրում էր կառավարութիւնից, միջոցներ ձեռք առնել, որպէս զի ժողովրդի, ոստիկանութեան և զօրքի մէջ ընդհարումներ տեղի չունենան։

Այդ ժամանակ Պետրոպաւլովսկի բերդը նեռվածներն էին. պրոֆեսորներ Վ. Ի. Մեմլենի և Ն. Ֆ. Կարէեվ, գրականագէտներ—Ն. Ֆ. Ստեֆանսկի, Ի. Վ. Հեսսեն, Մակսիմ Գորկի, Ա. Վ. Պեշեխոնով, Վ. Ա. Մակարենկո, յայտնի քաղաքային գործիչ Ե. Ի. Կեդրին, բանւոր Կուզին և շատ ուրիշներ։

Վերջապէս հէնց այս րոպէիս էլ, երբ գրվում են այս տողերը, Պետրոպաւլովսկի բերդի խցիկները լցված են բանտարկեալներով, որոնց մասին յաճախ գրված է վերջին ժամանակներս լրագրներում։ Ի միջի այլոց, ինչպէս յայտնի է, այնտեղ նստած են այս րոպէին, խորհրդի նախագահ պ. Նօսար-Խրուստալեվը, յայտնի էմիգրանտ Լէվ Դեյչը, «16 տարի Սիբիրում» գրքի հեղինակը, որ թարգմանվել է բոլոր եւրոպական լեզուներով, «բանւոր ժողովուրդ» (работій народъ) թերթի խմբագիր Վ. Վ. Կիրեակովը և շատ ուրիշներ։

Ինչ վերաբերում է Պետրոպաւլովսկի բերդի հեռաւոր անցեալին, նա, ի հարկէ, աւելի մաշ և արիւնալի է։

Ահա թէ, օրինակի համար, ինչ է ասում այդ բերդի անցեալի մասին յայտնի ռուս գիտնական և անարխիզմի թէօրիագէտ իշխան պ. Կրոպոտկինը, որը անձամբ իր կաշուի վրա փորձել է բերդում միայնակ բանտարկութեան տառապանքները, մօտ երեք տարի Պետրոպաւլովսկի խցիկներում նստելով։

«Այստեղ Պետրոս Ա-ը տանջանքների էր ենթարկում իր որդի Ալեքսէյին և իր ձեռքով սպանեց նրան։ Այստեղ, այս խցիկում էր բանտարկված իշխանուհի Տարականովան, երբ հեղեղաջուր ժամանակ սկսվեց ջուր լցվել։ Մէկները, ջրհեղեղից փախչելով, նստեց հագուստի վրա։ Էին բարձրանում։ Այստեղ դաժան Մենիխը իր քաղաքական հակառակորդներին տանջանքների էր ենթարկում, իսկ Եկատերինա II-ը կենդանի-կենդանի թաղեց նրանց, որոնք վրդովվում էին նրա ամուսնու սպանութեան դէմ...

«Եւ Պետրոս Ա-ի ժամանակներից ի վեր, ամբողջ հարիւր եօթանասուն տարվայ ընթացքում, այս քարէ հսկայի ժամանակագիրները, որ բարձրանում է Նեվայի միջից ձը-մեռնային պալատի դիմացը—խօսում են միայն սպանութիւնների, տանջանքների, կենդանի թաղվածների, կամաց-կամաց մահանալու դատապարտվածների, կամ թէ չէ մըռայլ ու խոնաւ խցիկներում միայնակ բանտարկութեամբ խելագարութեան հասցնելու մասին»։

Դժբաղդ իշխանուհի Տարականովայի մասին յիշատակելով, իշխան Կրոպոտկինը ոչինչ չէ ասում նրա գեղեցիկ ճակատագրի մասին, որովհետև բանը դպիլուց յետոյ դժբաղդ իշխանուհու մեղքը խորին զղջանքով է ծածկված։ Յայտնի ժողովրդական լեգենդայի ասելով, իշխանուհի Տարականովան

ԲԱՆԱՍԻԲԱԿԱՆ

ԾԱԳԵՑ ԼՈՒՅՍԸ

(Զատկական պատմուածք)

ՇԱՀԲԻԱԲԻ

Սիսթանի գաւառի Ն. գիւղը, անցեալ 19-րդ դարի եօթանասնական թուականների վերջին մի կատարեալ հակապատկեր էր ներկայացնում այժմեան վիճակի հետ։

Դա այն երանելի ժամանակն էր, երբ հայքրիստոնեան զգում էր, որ, փառք Աստծու, անցել են Թամերլանների, Զինգիզխանների, Նադիրների, Սուլէյմանների և այլ ասպատակիչների ու բռնակալների օրերը, այն օրերը, երբ հայը տէր-տիրական չէր իր հալալ աշխատանքին, իր ճակատի դառն քրտինքով վաստակած հարստութեան, իր հողին, իր այգուն, իր ընտանիքին և կեանքին։ Այլը այլ ևս չէր խանարհում մահիկի առաջ։ Հայ գիւղացին, հայ ժողովուրդը զգում էր, տեսնում իր աչքերով, որ այժմ կարելի է ապրել, ապա շունչ քաշել, որ այժմ ոչ ոք չէ կարող տարիպ նրան փախչել հեռու իր օջաղից, իր հողից, իր հայրենիքից, ուր ամփոփված են իր նախնիների նշխարները, այն հողից, որ գարերի ընթացքում ոռոգված, բեղմնաւորված է իր լաւագոյն զաւակների արիւնով, այն հողից, որ հարիւրաւոր տարիներով նա հերկել է իր ճակատի դառն քրտինքով, իր ջղաս բազուկների ոյժով։ Այժմ, այլ ևս վախով, ահ ու դողով չէ խփվում փայտէ կոշնակը դռներին և հրաւիրում ժողովրդին եկեղեցին։ ոչ, բարձր զանգակատնից՝ բարձր ոգեշնչում է զանգակը և իր զիլ ձայնը տարածելով հովիտների, ստրերի, դաշտերի մէջ, հրաւիրում ժողովրդին զատկական թաթախման պատարագին։

Այս ուրախ խոսքերով էր համակված Վանէս ապերը, Ն. գիւղի նահապետը, թիկնը տուած իր տան դարեւոր կաղնու բունին և աչքը ուղղելով իր շուրջը եռացող գիւղական պարզ և անպաճոյճ կեանքի վրա։

Իսկ կեանքը ճշմարիտ որ եռում էր։

Զատկի թաթախման օրն էր։ Ամեն տուն իր պատրաստութիւններն էր տեսնում սուրբ Յարութիւնը արժանաւորապէս հանդիպելու։ Թոնիրները ըորոգվում էին. մեծ կաթսաները՝ կաթով լի, եռ էին գալիս. պատրաստվում էին սեր, կարագ, մածուն, պանիր. ջահէղ հարսները և աղջիկները քիթ սրբելու ժամանակ չունէին. մի տեղ խմոր էին հունցում՝ կաթնոտունց և քաւթա թիելու, մի տեղ ձու էին ներկում—զատիկան կարմիր ձուն, և մի քանիսն էլ նախշում փոքրիկների համար, մի այլ տեղ ըրնձ էին թրջում փլաւի համար։ Մանչերը, Վանէս ապօր փոքրիկ թոռները, թոռնուհիները անագին աղմուկով, ընդարձակ բակում վազվզելով, ձուի կռիւ էին տալիս և երեսներին էլ մօտեցնելով, ուրախանում էին իրանց պապին ևս խաղալ, կռուել։ Յանախ էլ վազում էին Զատի տատի մօտ, որ նրան ևս տարիպն ձու խաղալ, բայց նա իր ձեռքի շերեփով, որով ղեկավարում էր հարսների և աղջիկների տնային աշխատութիւնները և զատկական բոլոր պատրաստութիւնները, քշում էր նրանց և փախցնում։

—Շուտ, շուտ արէք, հարսներ, աղջիկներ, հարայ էր տալիս Զատիկանին, արեք թեքվում է, պէտք է ամեն բան պատրաստել, մինչև զանգակները տալը և յետոյ գնալ շորերը հագնել՝ եկեղեցի գնալու համար։ Զը մոռանաք հովիւների համար ևս ամեն բան պատրաստել և ուղարկել. սուփրան պէտք է ժամ գնալուց առաջ պատրաստել, որ ժամաւորները եկան թէ չէ, թաթախվին քրիստոնէի նման։ Զը մոռանաք և մեր հարևան խեղճ տների բաժինը ժամանակին ուղարկել։

Վանէս ապերը իր ժիջան կողակցի և սան նահապետուհու այս պատրաստութիւնները տեսնելով, հոգով, սրտով հրճվում էր։ Եւ ինչու չը հրճվէր։ Աստուած և հայը Աբրահամը օրհնել էին նրա ձեռքի աշխատանքը. նրա տունը, օջախը լի էին բարութիւններով և շէն. մանամար էին նրա ոչխարների հօտերը, կովերի թիւը. նա ունէր ընդարձակ հողեր, դաշտեր, մայրագեհիներ, արօտատեղիներ, այգիներ. նա ունէր ժիր, համեստ, աշխատասէր զաւակներ, որոնք կրկնապատկում էին իր հարստութիւնը. իր բանւորներին, մշակներին նա սիրում էր իր զաւակների պէս և նրանք էլ յարգում էին նրան հարազատ հօր պէս։ Ոսկի էր նրա գութանը և օրհնված էր այդ գութանը։ Նա ինքը դեռ 50 տարեկան, առոյգ, ժիր ծերունի է, դեռ ընդունակ աշխատելու և աշխատում է, օգնում է իր որդիներին։ Նրա աչքի առաջ խայտալով խաղում են թոռները, որոնք, իրանց հայրիկի պէս, պէտք է ապօսն հայրենի օջախը և գան համբուրեն իր դերեզմանը, պապերի, նախնիների շիրիմները։

Ճշմարիտ որ Աստուած օրհնում է հալալ, քրտնաթոր աշխատութիւնը։

Վանէս ապերը հոգեկան խորին անդորրութիւն է զգում, մտածելով թէ որքան պէտք է շէնանայ, լցվի բարութիւններով և բարօրութեամբ իր նահապետական օջախը, եթէ Աստծու օրհնութիւնը այդպէս երկար շարունակվի և մայր հողը չը զանայ իր պտուղները։

Եւ ինչու՞ պէտք է զանայ հալալ, քրտնաթոր աշխատութեան տապ։

Յանկարծ, մի մռայլ միրք յուզեց, ալեկոծեց նրա հոգին։

—Իսկ եթէ այս խաղաղութիւնը, անդորրութիւնը տեսական չէ, եթէ հայը դեռ չէ քամել նեղութեան, դառնութեան մրուրը։ Եթէ յանկարծ, Տէր մի արասցէ, վերադառնան նախկին օրերը... Ոչ, ոչ, այդ անկարելի է. վաղուց հնչել է հայի փրկութեան ժամը, վաղուց նա գտել է իր ազատութիւնը ռուսաց հզօր արծուի թեւերի տակ։

Զարմանալի բան. որքան էլ Վանէս ապերը աշխատում է հեռացնել այս տխուր մտքերը, որոնք յանկարծ, առանց որ և է պատճառի, հոյլ հոյլ ծագեցին նրա մտքում, բոլորովին անակնկալ. բայց նա չէ կարողանում վանել, դէն քշել։ Նրա սիրտը ճմլվեց և նա ընդգրաբար զգաց որ մի դժբախտութիւն մօտալուտ է։ Բայց ինչ դժբախտութիւն։

Բնութիւնը պայծառ է և անդորր. կեանքը կենսատու ճառագայթներով տարածված է ամենուրեք։ Գարունը իր դարաւոր իրաւունքները բուրժուազիային ընդարձակելու, այլ միայն սրա հետ մասամբ բաժանելու պայմանով։

Եւ ահա բիւրօկրատիան այնպէս է ցոյց տալիս, թէ բաժանում է իր իրաւունքները բուրժուազիայի հետ ու սրան էլ է ուզում մասնակից անել երկրի օրէնսդրական խնդիրների մէջ։ Սակայն երբ խնդրին փոքր ինչ մօտիկից էք նայում, դուք իսկոյն նկատում էք, որ այս օլիան բիւրօկրատիան նոյն սիստեմին է հետևում, ինչ որ 90-ական թուականներին էր անում, այն է՝ ոչ թէ ճահիճը մի անգամից մաքրել, այլ միայն փոքրիկ առուակներով թարմացնել նրան։ Դրան իբրև պարզ և ամենապայծառ ապացոյց ծառայում է հետևեալը. ինչպէս յայտնի է, առաջներում Պետական Խորհրդի բոլոր անդամները նշանակվում էին, իսկ այժմ, իբրև մի մեծ բիֆֆօրմ, կառավարութիւնը որոշել է, որ այսուհետև Պետական Խորհրդի անդամների կէսը միայն կը լինեն նշանակվոր, իսկ միւս կէսը պէտք է ընտրվեն... ովքեր, ինչ էք կարծում։ Այդ ընտրվողներից խոշոր արդիւնագործութեան և վաճառականութեան ներկայացուցիչները, այսինքն՝ բուրժուազիան, ճիշտ ու երեք անգամ աւելի քիչ թուով պէտք է լինեն, քան հողատէր ազնուականներից ընտրվածները, որ դեռ չը հաշուելով այն 34 ներկայացուցիչները, որ պէտք է ընտրվեն զեմստվոների կողմից և, ի հարկէ, մեծ մասամբ գարձեալ ազնուականներ կը լինեն։

Այս բոլորից յետոյ, պարզ է, որ բուրժուազիային դարձեալ զրկում են, դարձեալ վիրաւորում։

Եւ մի՞թէ Ռուսաստանի բուրժուազիան կը տանէ, կը մարսէ այդ անվերջ վիրաւորանքներն ու զրկանքները։

Այդ ցոյց կը տայ ապագան։

Ռ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

Թիֆլիս է եկել դերասանուհի Եավրուպայան ներկայացումներ տալու զատկական առաջին և երկրորդ շաբաթների ընթացքում։

Ահա մի քանի տարի է որ Եավրուպայան այցելում է այս ժամանակները Թիֆլիս և Անդրկովկասի միւս խոշոր քաղաքները և առիթ տալ՝ սեւ ու կեղտ իր խմբի արած ռասպրեդիմենտները և ծանօթանալու մի քանի նոր պիես

անհասանելի սահմանի վրա, որ հօրիզոնի եզերագիծ է կոչվում, եզերագիծ, որին օրքան մոտենում ենք, այնքան հեռանում է։ Եւ այսօր, երբ քաղ. ժողովարանը երիտասարդութիւնից մտնում է միջահասութեան շրջանը, նա դեռ շարունակում է մեալ իբրև մի անբովանդակ գոյութիւն, զուրկ որ և է մտալից առանձնայատկութիւնից։

Աւելացրէք սրան միօրինակութեան այն սպանիչ ու տաղտուկ մթնոլորտը, որ թաւալել է ամբողջ ժողովարանը՝ ծծված թղթախաղերի սեղաններից բարձրացող կաւային ապականիչ փոշով, ծխով, ծառայողների անքուն, դալկացած դէմքերը, նրանց մրափն ու խռմփոցը և դուք կը զգաք ժողովարանի նոր այցելուի ստացած ապաւորութեան ամբողջ անախորժութիւնը։ Ժողովարանի կեանքը սկսվում է գիշերը թղթախաղով և մեռնում է ցերեկը։ Անշուշտ, արամաբանողներ կան, որ թղթախաղն էլ շատերի համար իր տեսակի հոգեկան հաճոյք է, չը նայած իր բացասական հետևանքներին, և ժողովարանի գոյութիւնը նրանցպէս ապահովող խոշոր ապրիւրներից մէկը, բայց պէտք է ի նկատի ունենալ, որ ոչ օք սկզբունքով դէմ չէ թղթախաղին, եթէ նա շատերի համար բաւականութիւն պատճառող միջոց է և եթէ, որ գլխաւորն է, նրա կողքին գրված լինեն և այլ յարմարութիւններ։ Ժողովարանը, իբրև հասարակական հիմնարկութիւն, ունի հասարակական նպատակներ, որոնք չեն ամփոփվում միայն բիլիարդ (որ ամեն մի գիշեռնում, ճաշարանում, հիւրանոցում և այլն կայ) կամ թղթախաղի սեղաններ ունենալու մէջ։ Ժողովարանի կեանքը բազմակողմանի դարձնելու համար հարկաւոր է կազմակերպել շաբաթական դասախօսութիւններ *) այլ և այլ հետաքրքիր, մարդու ինքնազարգացումը բարձրացնող նիւթերի վրա, ինչպէս զինուորական ժողովարաններում, և ունենալ մշտական բեմ ժողովարանի անդամների համար, պարահանդէսներ ու այլ բաւականութիւն պատճառող յարմարութիւններ։ Դասախօսութիւնների պաշտօնական իրագործումը հեշտ է մանաւանդ ձեռք բերել տեղական գաւառապահի՝ ամենից յարգված պ. Մակարովի աջակցութեամբ, որը նոյն ժողովարանի անդամ է։

Անցնելով ժողովարանի նիւթական գոյութիւնը, պէտք է ասել, որ նրա տարեկան մուտքը 1905 թ. կազմում է 10,922 ր. 8 կ., գոյացած մեծ մասամբ անդամավճարներից (160 անդամ), խաղթղթերից, բիլիարդից և այլն, իսկ ելքը՝—10,101 ր. 69 կօպ., ինչպէս այդ երևում է նոյն թուի հաշուետուութեան ադիւսակից։

Համառօտելով մեր երկարացած խօսքը, հարկաւոր են համարում մատնացոյց անել ժողովարանում գրադարանապետ չը լինելու անյարմարութեան վրա, որի պատճառով գրադարանը ցերեկը միշտ փակ է և լրագիրները չեն դրվում սեղանի վրա ցերեկվայ այցելուների համար ու ցանկանալ, որ ժողովարանի աւագների խորհուրդը հոգ տանէ քաղաքային ժողովարանի կեանքը դարձնելու բազմակողմանի ու հետաքրքիր, ձեռք բերելով աւելի մեծ թիւով անդամակցողներ։

Սրգ. Իսահակեան

*) Մանաւանդ որ անդամների մէջ կան ձեռնհաս մարդիկ, մասնագէտներ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Աւէքսանդրոպոլ, մարտի 28-ին

Զը գիտեմ, հարկաւոր է ասել, որ Մատ. վարդապետ իր համակով (Մշակ № 36) գալիս է ապացուցանել, որ Մշակի № 57-ի տեղեկութիւնները ճիշտ են եղել։ Դանք հոլովութեանը.—Ես կարծիք եմ յայտնել Սինօդի ծրագրի մասին. այդ կարծիքը գուցէ խիստ է, նա նոյն իսկ փոխանակ կոնսիստորային ուղղվելու՝ անմիջապէս սինօդին է ուղարկված. ենթադրենք նոյն իսկ, որ նա չափազանց վիրաւորական է։ Ինչ պիտի այդ դէպքում անէր Սինօդը. ամենածանր դէպքում գործը դատարանի պիտի յանձնէր։ Իսկ Սինօդը արել է, բայց ահա թէ ինչ։—Նախ, ուշադրութիւն է դրել ու պահանջել ադմինիստրատիւ եղանակով պատժել ինձ. նա սպառնացել է հրատարակելով. Զէ՞ որ այժմ դա մօդա է. խրախուսելի օրինակներ շատ կան։ Երկրորդ. այդ ձևով ինձ խիստ պատժելով նրանք զրկել են ուսել 1) պաշտպանվելու. ամեն հնարաւորութիւնից, 2) վճռաբկնիչ բողոք ներկայացնելու իրաւունքից։ Երրորդ. պաշտօնից հեռացնելն անպատիւ և կասեմ անտեղի կերպով, մի պատիժ է արդէն, բայց սինօդական «ներողամտութիւն» ասել է հարկաւոր է և աքսոր. այդ էլ է լինում. սա դեռ քիչ է, ինձ զրկում են վերարկու, փիլոնից, ոռնկից։ Մահապարտին անգամ հնարաւորութիւն և իրաւունք են տալիս պաշտպանվելու, իսկ Սինօդը աշխատեց զրկել և զրկեց ինձ՝ մահապարտին իսկ թոյլատրված այդ իրաւունքից՝ պաշտպանվելու և վերջին խօսքն ասելու իրաւունքից։ Այս բոլորից յետոյ Սինօդը ուզի էլ ինչ կարող էր անել, որ «Մշակը» «աններողամտութիւն» չանուանէր արդեն։ Երևի վիզս կուզենար կարել, որ չէ արել ու սրա համար է, որ իմ դէմ ձեռք առած բոլոր այդ միջոցները «ներողամտութեամբ» վարվելու ապացոյցներ են հաշուում։ Մարդ սարսափել կարող է այդպիսի «կրթական ներողամտութիւնից»։ Ռուսասանումն էլ «ներողամտաբար» հրացանագարկ չեն անում քաղաքական յանցաւոր նկատված շատերին, այլ աքսորի, տաժանակիր աշխատանքների են դատապարտում։

Մատ. վարդ. գրում է որ «ծեր. հայրապետը ոչ թէ շապել է ուղղել Սինօդի սխալը, այլ իր անհուն բարութեամբ զղջացող յանցաւորին ասել է «թողել լիցին քեզ մեղք քո». այսինքն, որ Սինօդը սխալ չէ արել, անհերոամիտ չէ եղել, արդար է վարվել։ Արժէր երկար կանգ առնել այստեղ, սակայն երբ այդ մարդիկ վարչական կարգով պատժելը գերագոյն արդարութիւն են ճանաչում, երբ իրանց այդ քայլը սխալ չեն հաշուում, երբ նրանք փախչում են հրապարակական դատից ու քննութիւնից, այդքանն էլ բաւական է նրանց բարոյական պատկերը պարզ անելու համար։ Անցնենք։

Այդ վարդապետն ասում է, որ ես «ներումն էի հայցում իմ գրածի համար»։ Պարտաւոր եմ հրապարակով յայտնել, որ Սինօդի ծրագրի մասին տուած յայտարարութեան (փետր. 20-ին) համար ես ոչ մի ներողութիւն չեմ խնդրել, չեմ ետ առել ու չեմ ետ առնի նրա և ոչ մի բառը. եթէ նա այդ է ակնկալում, դա հիմնովին սուտ է։ Ահա իրողութիւնը։

Մարտի 4-ին ինձ պատժող կոնդակն ստանալուց յետոյ մի յայտարարութեամբ, որի մէջ վիրաւորական խօսքեր կային և Սինօդի հասցէին, ես ասում էի, որ թողնում եմ վարդապետութիւնը։ Մարտի 10-ին, երբ արդէն մի քանի անգամ հեռագիրներ էին փոխանակվել եպիսկոպոսների հետևեալ հեռագիր

մասին, այսօր էլ Թիւրքիայի քաղաքները սկսում են, կենդանութեան նշաններ ցոյց տալով, յեղափոխական շարժումների միտեղ։ Եթէ, ժամանակին, յեղափոխական հեղեղների քաղաքական բարենորոգումների և տնտեսական բարկարգութիւնների միջոցով ելքեր չը բացվին, կասված չը կայ, որ վարարելով՝ ողողել սկսող այդ հեղեղները պէտք է ստանան մի վանգաւոր կերպարանք։

Վերջերս օսմանեան քաղաքներից մէկում, կասթէմունիում, Երիտասարդ-Թիւրքերի գործունէութեան իրքև արդիւնք, ժողովուրդը յուզվելով, զրգռվելով, կառավարութիւնից լուրջ պահանջներ արեցին։ Եւ մասամբ էլ իրանց պահանջներին բաւականութիւն ստացան։ Կասթէմունիի ազգաբնակութեան այդ եռանդուն շարժումների մասին «Թիւրք» լրագիրը «կեցցէն կասթէմունցիները» տիտղոսով մի յօդուած է հրատարակել, ուր ասում է թէ այդ շարժման մղվել են կասթէմունցիները ոչ թէ զարգացմամբ, այլ քաղցից։

Ժողովուրդը քաղցած է մնում, կողոպտվում է, թալանվում է. արդէն իսկ ազգաբա, ամբողջվին թշուառանում և քանդվում է։

Ինչպէս ամեն բանի, նոյնպէս համբերութեան համար մի չափ ու սահման կայ։ Եթէ այդ չափի վրա մի կաթիլ էլ լցնէք, նա կը յորդի։ Իր իրաւունքների մէջ բռնաբարված ժողովուրդը, ամեն միջոցի կը դիմէ, նոյն իսկ իր կեանքից ձեռք կը քաշէ, տիրանալու համար իր խլված իրաւունքներին։

Այժմ, ով ճնշված, թշուառ վիլայեթներ... Ձեր աչքի առաջ կայ մի կասթէմունիի Այսուհետև այդ նորագոյն, այդ ակներև, այդ կատարեալ դասը թող ձեզ համար մի օրինակ հանդիսանայ։ Մի հարստահարված ժողովուրդ, մի քաղցած, թշուառացած ազգ վաղուց է դէպի հեռագրի գլուխը։ Եւ իր միջից մի հայրենակցի, անկասկած հեռագրական գործին ծանօթ մի զինուորի ընտրելով՝ հեռագրական մեքենայի գլուխ է կանգնեցրել, վանդել է հեռագրական պաշտօնեաներին։ Նրանք՝ իրանց արդացի ձայնը անլսելի մնացած լինելուն համար անարգում են հրամանատարին, սպիտում են մանաւանդ նահանգի բռնակալին (նահանգապետին) իր տան մէջ բանտարկվել, հիւանդ ձևանալ։

Եւ յիշոյ... Կ. Պոլսում, Եըլդըզի բլրի վրա հանգչող թագաւորի հետ հաղորդակցութեան մէջ են մտնում։

Առանց աղմուկի, առանց զէնքի և շղուկի, խաղաղ, խոնարհ, ուժեղ մի շարժում։

Այդ առիթով սուլթանը կասթէմունիի վալիին և նահանգական հաշուապահին պաշտօնանկ անելն ու մի մասաւոր քննիչ յանձնաժողով ուղարկելը ծանուցանելով, իր կայսերական փրկարար ողջոյնը հաղորդում աւեստում է։

Ամեն տեղ նոյն երևոյթին ենք հանդիսատես լինում։ Միայն թէ պէտք է գիտենալ պահանջել և ապացուցել, որ ինքը տէրն է այն իրաւունքներին, որոնք յափըշտակված են։

Արդեօք մեր որ վիլայէթը, որ քաղաքն ու որ գիւղը կասթէմունիից պակաս հարստահարված, պակաս թալանված է... Այս դէպքում ինչու ենք լռում, ինչու պապանձվում։ Այժմ մեր աչքի առաջն է կասթէմունիի օրինակը։

Մտածեցէք թէ ինչպէս մի կասթէմունիի ցոյց տուած այս առնական վարմունքը ստիպել է երկրի ամենամեծ պաշտօնային մեզմ և կարեկցական ընթացք ընդունել... Արդեօք բոլոր նահանգները, բոլոր հարստահարված ները և մանաւանդ Կ. Պոլսում, լըրտեսների ձեռքում ամենադաս ցաւի ու գերութեան մէջ քաշ եկողները, եթէ մի անգամ շարժվեն, ինչէր կարող են լինել...

Ո՞վ Բարձր-Դրան քաղմամանները...

Կասթէմունցիները, համբերութիւնից և կարողութիւնից դուրս եկած՝ պահանջում են քաղաքային վարչութիւնն բիւրջէի մասին տեղեկանալ և երևմուքի վրա վերահսկողութիւն հաստատել։

Վաղը նահանգի, հետևեալ օրը պետական բիւրջէի հարստութեան և աղքատութեան մասին տեղեկութիւն պէտք է պահանջեն, պէտք է ուզեն իմանալ թէ որտեղ են գնում, ինչ են լինում իրանց առատ-առատ վճարած փողերը։ Եւ կամաց - կամաց մամուլի, ժողովների ազատութիւն պէտք է պահանջեն։ Ազատութիւն պէտք է աղաղակեն...

Կասթէմունիի կենտրոնից սկսելով՝ մի իսկական ազատութիւն պէտք է տարածվի շուռով միւս քաղաքները, միւս նահանգները և վերջ ի վերջոյ բոլորը նոյն վախճանը պէտք է ունենան—թալանվածները իրանց ստացուածքը յետ պէտք է պահանջեն, գերութեան շղթաներում հեծողները իրանց ազատութիւնը։

Դա մի այնպիսի բնական վախճան է, որ հակառակը ապացուցելու համար մի հատ օրինակ իսկ չէ կարելի գտնել ազգերի պատմութեան մէջ։

Այս բոլորը շատ գեղեցիկ է, բայց արդեօք Թիւրք երիտասարդութիւնը ուժեղ պրոպագանդա մղելով երկրում, ժողովուրդի մէջ, պէտք է կատարվի՞ իր պարտականութիւնը, թէ պէտք է արդարացնէ իր անգործունէութեամբ այն տարածված կարծիքը, թէ Թիւրք ժողովուրդը չէ կարող իր սեփական ոյժերով, իր նախաձեռնութեամբ վերանորոգել հայրենիքը։

Այդ ցոյց կը տայ ապագան։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԶԻՆԱՍՏԱՆ

Կայսրը հիւանդ.—Կուանգ Սու, Զինաստանի երիտասարդ կայսրը ծանր հիւանդ է։ Արևելքում ինչպէս սովորութիւն է այդպիսի հանգամանքներում, չինական արքունիքը աշխատում է իրողութիւնը թագցնել, որպէս զի նոր գահաժառանգի հարցը յուզումների, դուցէ անկարգութիւնների տեղիք չը տայ։ Բայց որովհետև եւրօպացի բժիշկներ հրաւիրված են ծանր հիւանդի մօտ, լուրը չէ աջողվում ծածկել։ Մինիստրները ժողով են ունեցել զբաղվելու համար նոր թագաժառանգի ընտրութեան խնդրով։

ԳԵՐՄԱՆԻԱ

Ցուսախաբութիւնը.—Ալժեզիրասի կոնֆերենցիան սաստիկ յուսախաբութեան մէջ է ընկղմել Գերմանիային։ Ի՞նչ մեծ յոյսեր էր դրել ասպետ Վիլհելմը այդ քաղաքական մանեսվրի վրա։ Նա կարծում էր, որ մի նոր, խաղաղ, դիւանագիտական Սեդան պիտի քաղէ Ալժեզիրասում։ «Բաց դռների» քաղաքականութիւնն էր պաշտպանում Մարոկկիսուրեմ, մտածում էր, եւրօպական միւս բոլոր պետութիւնները պիտի միանան իրան։ Բայց իրողութիւնը ուրիշ բան ասաց։ Բացի Աւստրիայից, եւրօպական բոլոր պետութիւնները նրա դէմ կանգնեցին։ Նա ընկերներ էր որոնում, Ալժեզիրասից յետոյ միայ աւելի քան մեկուսացած։ «Berliner Tageblatt» ողբալով դժբաղդութեան վրա, նկատում է. «Գերմանիայի, Ալժեզիրասում ստացած արդիւնքները բնաւ համեմատվել չեն կարող ոյժերի այն լարումին, որ նա գործ դրեց։ Նոյնիսկ այն օգուտները, որ նա ձեռք բերեց, չափազանց թանգ նստեցին նրա վրա, միջազգային քաղաքականութեան տեսակէտից։ Եւ սակայն Գերմանիան ստացաւ այն՝ ինչ կարելի էր, հնարաւոր էր. Բիսմարկի հանճարն անգամ աւելին ստանալ չէր կարող։ Բայց Բիսմարկը կօնֆերենցիային չէր գնայ, որովհետև նա դրական արդիւնքների քաղաքականութեան մարդ էր։ Ի՞նչ տուեց կոնֆերենցիան, որ մենք կարող չը լինէինք ձեռք բերել ուղղակի բանակցելով Ֆրանսիայի հետ։ Չը պէտք է մոռանալ, որ Գերմանիայի հետ համաձայնութեան գալու համար պ. Բուվիէին անկեղծ ջանքեր էր գործ դրել։

—Ինչու՞, ասել էր նա, չը պէտք է կարողանանք մի համաձայնութիւն կնքել, այնպիսի ձևով, որ Ֆրանսիան կնքել է Անգլիայի հետ։

Գերմանիան այս առաջարկութեան առաջ միայն խուլ ձևացաւ. ինչ որ աւելի է ծանրանում, եթէ նկատենք, որ 1901 թ. նոյնպիսի սխալ գործել ենք մենք։ Այդ ժամանակ, երբ Սպանիայի թագուհին վախենալով Անգլիայի հակառակութիւնից, մերժեց վաւերացնել իր դեսպանի, պ. զէլ Մունիի և պ. Դելկասէի միջև Մարոկի մասին կայացած համաձայնութիւնը, Ֆրանսիան դարձաւ Գերմանիայի կողմը և նրան առաջարկութիւններ արեց։ Բայց այդ առաջարկութիւնները մերժվեցին, որովհետև Գերմանիայում այնպէս էին կարծում այն ժամանակ, որ անկարելի էր մի անգլօ-ֆրանսիական համաձայնութիւն։ Բայց եթէ Գերմանիային կարելի էր ներել առաջին անգամ, որովհետև նա խաբվեց աքսաքին սխալ երևոյթներից, այս վերջին անգամ նա միանգամայն անդրդարանալի է, որովհետև կորցրեց երկրորդ նպաստաւոր առիթը»։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Աղդ սրութեան տուն—Թէհրանի հոգևորականների Շահարուլ Ագիմ «բաստ» նստելուց և «Արդարութեան տան» մասին Դասդը Խանդդ մանիֆեստ—ստանալուց յետոյ, գրված է Թէհրանում լոյս տեսածիմ թռուցիկում ամբողջ ժողովուրդը և ազգը սպասում էին թէ ե՞րբ երջանկութեան դուռը պէտք է բացվէր, և ե՞րբ երկրիամին կրկմերում պետական ժողովի ընտրութիւնները պիտի կատարվէին։ Ե՞րբ մեր հոգևորականները կատարեալ մարդկանց հետ նոր օրէնքի խմբագրութեամբ պիտի զբաղվէին։ Բայց, ամեն, բոլոր ցանկութիւնները երաղ են եղել. ոչ կառավարութեան կողմից ցուցմունք եղաւ, և ոչ հոգևորականների մէջ կենդանութիւն առաջ եկաւ։ Նորին Մեծութիւնից երբ հարցնում էին այս մասին, բարեհաճում էր պատասխանել.

—Մեր գործն էր Դասդը-Խադդը տալ, իսկ Աթաբէգի պարտականութիւնը՝ նրան գործադրել։

Աթաբէգը Աղամին հարցնում էք. պատասխանում է.

—Ցանցանքը հոգևորականներին է. Շահնշահի հրամանի չը գործադրվելու պատճառը նրանց անհամաձայնութիւնն է։ Ե՞րբ նրանք ժողով բաց արվի և կառավարութիւնը նրանց չօգնեց և կամ արգելք հանդիսացաւ։

Հոգևորականներին հարց էք տալիս. պատասխանում են.

—Մեծ արգելքը Աթաբէգն է։

Ժողովրդի ազդեցիկներին հարցնում էք. պատասխանում են.

—Գլխաւոր պատճառը միրզա Մոսդոֆին, սէյիդ Ալա Ալէդդին և Միրզա Աբու էլ Կասիմ և սէյիդ Ահմէդն են։

Ասում էք գոնէ ամեն մարդ իր իմացածն ու տեղեկութիւնները թող գրի առնէ և ժողովրդի մէջ տարածէ. դուցէ ժողովրդի միջից մի լոյս ծագէ և հայրենիքի անձնազոհներ՝ արդարութեան օրէնքին հակառակողներին տան նրանց արժանի պատիժը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻ

30 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 մարտի։ Բարձրագոյն հաստատված է Պետական Խորհրդի կարծիքը մտցնելու երդուեալ ընթերակաների դատարան Ստաւրապոլի և Զբնօմօրեան նահանգներում, ինչպէս նաև Կուբանկի շրջանում։

ՄՕՍԿՎԱ, 29 մարտի։ Համալարանի խորհուրդը որոշեց միջնորդել՝ քանալու համալարանը։

ՊԱՐԻԶ, 29 մարտի։ Գործադուլ արին նամակատարները։ Առաւօտեան Լուվր փողոցի պօստատան 800 ծառայողներից 650-ը յանկարծ հեռացան. կէսօրին գործադուլ արին և միացան ծառայողները։ Նամակների բաժանումը խանգարվեց, իսկ դէպի արտասահման և գաւառները ուղարկվվելիք պօստը առ այժմ կանգնաւոր է։ Գործադուլ անողները յայտնում են, որ նրանք աշխատանքները դադարեցրել են ոչ միայն առձիկները աւելացնելու նպատակով, այլ և կառավարութեան վարմունքի պատճառով՝ որ մերժել էր ընդունել իրանց սինդիկատին։

ԼԱՆ, 29 մարտի։ Երկոյեան, Մօնտիսի եկեղեցում ռումբ պայթեց. մարդկային զոհեր չը կան։

ՕԴԷՍՍԱ, 29 մարտի։ Զինուորական դատարանի վճռով մահվան դատապարտված Ժուկովը խնդիր է ներկայացրել զօրքերի հրամանատարին ներել իրան։ Եապօնական հիւպատոսարանը սկսեց իր գործունէութիւնը։

ՎԱՐՇԱՎԱ, 29 մարտի։ Լոզզի բանւորների ընտրութիւնների առիթով, այսօր սոցիալիստների ազդեցութեան տակ գործադուլ արին գործարանները, դադարից գործեցուց էլեքտրաքարշը, իսկ ըէստորանները փակվեցին։

ՎԼԱԴԻՎԱՍՏՕԿ, 29 մարտի։ Նահանգապետի հրամանով ազատ են թողնված քաղաքական 36 բանտարկեալներ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 29 մարտի։ Դիպլոմատիական շրջաններում տիրում է այն կարծիքը, թէ աւելի յարմար է Հաագի երկրորդ խաղաղարար կօնֆերէնցիան գումարել 1906 թ. յունիսին, որպէս զի Բիօ-Եանէյրօի կօնֆերէնցիան չը զուգադիպի Հաագի կօնֆերէնցիայի հետ։ Ֆրանսիական կառավարութիւնը յայտնել է ռուսաց կառավարութեան, որ պարտական կը մնայ Ռուսաստանին, եթէ նա կը բարեհաճէ իր ազդեցութիւնը գործ դնելու՝ Հաագի կօնֆերէնցիան յետաձգելու համար, ինչպէս արդէն ցանկանում են Միացեալ Նահանգները։ Բօզէնը այդ հաղորդել է իր կառավարութեան։ Ստացված են հեռագիրներ, Նիստերլանդիայից, Բէլգիայից, որոնք համաձայն են կօնֆերէնցիայի յետաձգման։

31 մարտի

ՍԱՅԳՕՆ, 29 մարտի։ Համալսարանական դասընթացքները հրդեհից համարեա ոչնչացել է։ Այրվել են հնդիկների մեհեանները, տեղացիների համար հիմնած ֆրանսիական դպրոցները, չինացիների խանութները, 50 տներ։ Վնասները հասնում են 500,000 պիաստրի։ Մարդկային զոհեր չը կան։

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 29 մարտի։ Մինիստր-նախագահ Վէկէրլէն կօալիցիական կուսակցութիւնների ժողովում մի ճառ արտասանեց, որի մէջ ասաց, որ կառավարութիւնը խնդրելուէ պարլամենտին՝ որ նա հաստատէ տագնապի ժամանակ եղած ծախքերը և քուէարկէ զինուորական այն փոխատուութիւնները, որ նախատեսված են 1905 և 6 թուականների բիւրժէտներով և որ դեռ ևս չեն ընդունված։ Կառավարութիւնը կարևոր չը գտաւ աւելացնել նորակոչների թիւը։ Ճգնաժամի ժամանակ գործադրվող առևտրական դաշնագրութիւնները պէտք է ներկայացվեն պարլամենտին։ Աւստրիայի հետ կապած առևտրական և մաքսային համաձայնութիւնները պէտք է ընդորոշվեն առևտրական դաշնագրութեան ձևով, ինչպէս երկու անկախ պետութիւնների միջև, և ոչ թէ առևտրական դաշնակցութեան ձևով։ Կառավարութիւնը կը մտցնէ ընտրողական բարենորոգում, ապա կարձակէ պարլամենտը և ընտրութիւններից յետոյ,—որոնք կը կայանան նոր սիստեմով,—հրաժարական կը տայ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 մարտի։ Մինիստրների Խորհուրդը մարտի 28-ի նիստում որոշեց նախապէս առնելով Բարձրագոյն հաճութիւն—կազմել առևտրի մինիստրութեան ժամանակաւոր կառավարչի նախագահութեամբ—մի առանձին խորհրդակցութիւն—պալատի, արտաքին գործերի, լուսաւորութեան մինիստրների, գիտութեան ճեմարանի և զեղարուեստի ներկայացուցիչներից—մասնակցութեամբ զբաղմանութեան, զեղարուեստի և նկարչութեան ներկայացուցիչների,—քննելու համար Գերմանիայի, Ֆրանսիայի և Աւստրիայի հետ համաձայնութիւն կապելու հարցի մասին, հեղինակների իրաւունքները փոխադարձ կերպով պաշտպանելու համար՝ գրականութեան, գեղարուեստի լոյս տեսածիմ թռուցիկում ամբողջ ժողովուրդը և ազգը սպասում էին թէ ե՞րբ երջանկութեան դուռը պէտք է բացվէր, և ե՞րբ երկրիամին կրկմերում պետական ժողովի ընտրութիւնները պիտի կատարվէին։ Ե՞րբ մեր հոգևորականները կատարեալ մարդկանց հետ նոր օրէնքի խմբագրութեամբ պիտի զբաղվէին։ Բայց, ամեն, բոլոր ցանկութիւնները երաղ են եղել. ոչ կառավարութեան կողմից ցուցմունք եղաւ, և ոչ հոգևորականների մէջ կենդանութիւն առաջ եկաւ։ Նորին Մեծութիւնից երբ հարցնում էին այս մասին, բարեհաճում էր պատասխանել.

—Մեր գործն էր Դասդը-Խադդը տալ, իսկ Աթաբէգի պարտականութիւնը՝ նրան գործադրել։

Աթաբէգը Աղամին հարցնում էք. պատասխանում է.

—Ցանցանքը հոգևորականներին է. Շահնշահի հրամանի չը գործադրվելու պատճառը նրանց անհամաձայնութիւնն է։ Ե՞րբ նրանք ժողով բաց արվի և կառավարութիւնը նրանց չօգնեց և կամ արգելք հանդիսացաւ։

Հոգևորականներին հարց էք տալիս. պատասխանում են.

—Մեծ արգելքը Աթաբէգն է։

Ժողովրդի ազդեցիկներին հարցնում էք. պատասխանում են.

—Գլխաւոր պատճառը միրզա Մոսդոֆին, սէյիդ Ալա Ալէդդին և Միրզա Աբու էլ Կասիմ և սէյիդ Ահմէդն են։

Ասում էք գոնէ ամեն մարդ իր իմացածն ու տեղեկութիւնները թող գրի առնէ և ժողովրդի մէջ տարածէ. դուցէ ժողովրդի միջից մի լոյս ծագէ և հայրենիքի անձնազոհներ՝ արդարութեան օրէնքին հակառակողներին տան նրանց արժանի պատիժը։

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երեքշաբթի, ապրիլի 4-ին

Դերասանուհի Ս. Աղամեան և դերասան Վ. Մելքոյեան, մասնակցութեամբ տ. Զաբէլի, պ. Ռշտունու և սիրողների

կը ներկայացնեն

ՀԱՒԻՏԵՆԱԿԱՆ ՍԷՐ

Դրամա 3 գործ. հեղ. Հ. Ֆաբերի

Ներկայացումից յետոյ

ՊԱՐԵՐ

Սկիզբն է ժամը 8-ին երեկոյեան

Տեղերի գները 3 ռուբլուց մինչև 80 կ.։

Շարունակվում է բաժանորդագրութիւն

„ԿԵԱՆՔ“

Քաղաքական, հասարակական և տնտեսական օրաթերթի՝ որ քաղաքական պայմանների հնարիւ առ այժմ կը հրատարակվի իբրև՝

ՕՐԱԹԵՐԹ

Բաժանորդագինն է՝ Թիֆլիսում տարեկան 2 ռ. 50 կ., դուրսը տարեկան 4 ռ.։ Ամսական Թիֆլիսում 20 կ., դուրսը 30 կ.։ Արտասահման 40 կ.։ Հատով Թիֆլիսում 5 կ. դուրսը 7 կ. Բաժանորդագինը կարելի է վճարել մասամբ, մանաւանդ բանւորների և գիւղացիների համար։

Հասցէն՝ Тифлисъ редакція «Кянкъ», Чавчавадзевская ул. № 4. Արտասահմանից՝ Tiflis «Kiank», Tzchawtzchawadsevskaia № 4.

Խմբագիր հրատարակիչ Բ. Իշխանեան

ԿԵՑԻՐ

Բժիշկներ Սօկոլսկի, Գօտերստեդի, Շմիտի, Բիլի և ուրիշ հետազօտութիւնից երևում է, որ կեցիրը չափազանց նպաստում է կշռի աւելանալուն. կեցիրը գործ է ածվում թոքերի հիւանդութեան, ալիքների կատառի, արեան պակասութեան, ջրջրուկի, (золотуха) դպրկաւորութեան, ուժասպառութեան ժամանակ և առհասարակ լաւ ներգործութիւն է ունենում ջղերը հանգստացնելու վրա։ Պատերի է ձեռք բերել Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մելիքեանի փող. սեմինարիայի դիմաց։ Ծանկացողներին կարելի է ուղարկել իրանց բնակարանը։

(հ.կ.) 14—20

Վաճառումից գոյացած ամբողջ գումարը յատկացվում է Բագուից Թիֆլիս գաղթած չքաւոր հայ գիմնազիստ աշակերտների ու աշակերտուհիների օգտին։

—

Լոյս տեսաւ և վաճառվում է

Պրոֆ. Ս. Կրիմսկի

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՆ ՈՒ ՆՐԱ ԱՊԱԳԱՆ

Հեղինակից յատուկ թոյլատրած թարգմանութեամբ

ԲԱՐԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

(ժդ+170 երես։ Գինը 60 կոպ.)

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին և թարգմանչին՝ Սբ. Էջմիածնոյ Архимандриту Бабкену.

(Ե.Հ.Կ.) 3—5

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ IV. V.

„Հայոց հին ճարտարապետութեան նշմարներ“

Գեղարուեստական հրատարակութեան առաջին տետրը՝

լուսանկարներ և գծանկարներ

Քաղաքային ճարտարապետութեան ճեմարանի պրոֆէսոր և ակադեմիկ

Գեր. Դ. Թրիմի խմբագրութեամբ

կազմեցին և հրատարակեցին Լ. Եղիազարեանց և Ռուբ. Մարտիրոսեանց։



Այդ հրատարակութիւնը բաղկանալու է 10 տետրից—իւրաքանչիւրի մէջ 5 (in quarto) լուսանկար ու գծանկար Հայաստանի ճարտարապետական գնահատելի նշմարներից—համապատասխան բացատրութիւններով՝ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն լեզուներով գրված։

Տպագրվում է սահմանափակ քանակութեամբ։ Շարունակվում է բաժանորդագրութիւն հետեւեալ պայմաններով. ամբողջ հրատարակութեան (10 տետրի) արժէքն է ճանապարհածախսով, 13 ռ. 50 կ., իսկ մաս-մաս վճարելով 14 ռ. 50 կ.։ Այս երկրորդ դէպքում պէտք է տալ կանխավճար 2 ռ. 50 կ., ապա իւրաքանչիւր տետրը կուղարկվի 1 ռ. 20 կ. վերադիր վճարով։

Այս հրատարակութեան հետ ծանօթանալ ցանկացողները կարող են ձեռք բերել ա տետրը Թիֆլիսի Կենտրօնական և Գուտտենբերգ գրավաճառանոցից, վճարելով 1 ռ. 20 կ., որ բաժանորդագրութեան դէպքում հաշուի կառնվի։

Հետեւեալ տետրները առանձին չեն վաճառվի։ Բաժանորդագրութիւնը վերջանալուց յետոյ հրատարակութեան արժէքը զգալի չափով կը թանգանայ։

Դիմել՝ С.-Петербургъ, институтъ гражданскихъ инженеровъ, 2-я Рота Руб. Мартиросяну.

Հայոց Դրամատիկական Ընկերութեան

Մարտի 19-ի ընդհանուր ժողովում մրցանակաբաշխ յանձնաժողովի անդամ ընտրուեցին՝ պ. պ. Տիգրան Յովհաննիսեան, Աշոտ Աթանասեան, Տիգրան Զաւէն, Միքայէլ Զաբար, Ստեփան Բափանեան և Գէորգ Պետրոսեան։

Մրցանակները (երեք մրցանակ յանուն տրիկն Մ. Մակարեանի, իւրաքանչիւրը 150 ռ., և երկու մրցանակ պ. Աղասի Մելիք-Այվազեանի, իւրաքանչիւրը 100 ռ.) յատկացված են բոլորովին նոր կամ միայն վերջին սէզօնում ներկայացված լաւագոյն հայերէն ինքնուրոյն պիէսների համար, իսկ պ. Մելիք-Այվազեանի մրցանակներից մէկը՝ առանձնապէս ժողովրդական կեանքից վերցրած պիէսի համար։

Միևնոյն պիէսի հեղինակը, նայելով գրուածքի արժանաւորութեան, կարող է ստանալ նաև երկու կամ երեք միացեալ մրցանակներ (200 ռ., 300 ռ. կամ 450 ռ.)։

Մրցման ենթարկվող պիէսները պէտք է ուղարկվեն յանձնաժողովի նախագահ պ. Տիգրան Յովհաննիսեանի հասցէով (Ռուսաստանից՝ Тифлисъ, Сергіевская, № 1, присяжному повѣренному Тиграну Нерсесовичу Іоаннисянцу, իսկ արտասահմանից՝ Russie, Caucase, Tiflis, Avocat Tigran Oohannissian) ոչ ուշ քան 1906 թ. սեպտեմբերի 1-ը։

Հեղինակների անունները պէտք է անյայտ լինեն յանձնաժողովի անդամներին, ուստի պիէսների վրա պէտք է մակագրել կեղծանուն կամ մի ընաբան, իսկ մի ծրարում, որի վրա կը լինի նոյն կեղծանունը կամ ընաբանը, ներկայված պէտք է լինի հեղինակի իսկական անունը։ Մրցանակները յատկացնելուց յետոյ, յանձնաժողովը կը բանայ միայն այն ծրարները, որոնց տէրերը մրցանակի կարժանանան։ Միւս ծրարների տէրերը նեղութիւն կը կրեն յետ ստանալ իրանց պիէսները իրանց ցոյց տուած անձի միջոցով կամ հասցէով ստորագրելով իրանց պահանջը իրանց ընտրած կեղծանունով կամ ընաբանով։

Մրցանակաբաշխութեան արդիւնքը կը յայտարարվի Հայոց Դրամատիկական ընկերութեան 1906 թ. տարեկան ընդհանուր ժողովում, որ կայանալու է սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամսին։

(1, 7, 12) 1—3

„РОССІЯ“ Ապահովագրական Ընկերութիւնը կատարում է ապահովագրութիւններ դրամագլուխների, մահվան դէպքերի, ծերութեան, կենդանութեան ժամանակ եկամուտների, այրիների թոշակների, աղջիկների օժիտների, երեխաների թոշակների վերաբերեալ։

1905 թ. ապահովագրված էին 81863 մարդ, միջին թւով իւրաքանչիւրը՝ 2080 ռուբ.։

Մանրամասնութիւնների համար դիմել վարչութեան (С.-Петербургъ Морская, № 37) և Կայսրութեան բոլոր քաղաքների գործակալներին։

Թիֆլիսում՝ Сергіевская ул. № 4. 1—4

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն

«ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES».

10/23-ին ապրիլի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 4-ին, «Memphis» շոգենաւը, հանդիպելով՝ Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Բալամաթա, Մարսէյլ, Հալը և Լոնդոն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները՝ պակասեցրած գներով, այս անգամ տեղերն Ա. կլասի, արդէն բռնված են։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Ցակոբեանին, նախկին Աբջրունու գալերէյում, թիւ 127 դրասենեակը, հեռախօս՝ թիւ 608։ Դրասենեակը բաց է 9—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից։

(Ն.) 1—1

Թիֆլիսի Նաւարարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

սրանով պատիւ ունի հրաւիրելու պ.պ. բաժնետէրերին արտակարգ ընդհանուր ժողովի, որը կայանալու է ներկայ 1906 թ. ապրիլի 4-ին, երեքշաբթի օրը, առաւօտեան ժամը 11-ին, ընկերութեան գրասենեակում, որը գտնվում է Սերգիևսկայա փողոցում, Քրիստոնոլի տան № 7։

Պարապմունքի առարկան կը լինի։

Տէրունական գանձարանից փոխառութիւն ստանալու հարցը, համաձայն նոյեմբերի 11-ին, 1905 թ. Բարձրագոյն հաստատված մինիստրութեան կօմիտէի որոշման։

Եթէ ժողովը սահմանված ձայների քանակութեան բացակայութեան պատճառով չը կայանայ, երկրորդ անգամ նշանակվում է նոյն տեղը, ապրիլի 9-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին, որը կը համարվի կայացած, ի նկատի չառնելով ձայների քանակութիւնը (§ 29)։

23,25 ,30) 3—3

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտարարում է ի գիտութիւն ընդհանուրի, որ Թիֆլիս քաղաքի և նրա գաւառի ընտրողների ցուցակները ի ցոյց դրված կը լինեն քաղաքային վարչութեան շինութեան մէջ սկսած ապրիլի 11-ից։

(Կ) 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Գ. ԶԱԽԱՐԻԴԵԱՆ

Ներքին եւ նեարվային հիւանդութիւնների

Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7։ Լերմօնտօվսկայա փողոց, տուն № 16։

(ա. օ.) 7—50

Մի պարոն, որը երկար տարիներ ծառայել է պետական հաստատութիւններում որպէս հմուտ քարտուղար և գործավար, խնդրում է ծառայութիւն։ Հասցէն՝ Աւճաեան փողոց № 63, մեքենագէտ Լուսինեանցի բնակարան։

(ու. Ե. Հ.) 3—3

ШВЕЙНЫЯ МАШИНЫ
ШВЕЙНЫЯ МАШИНЫ
ШВЕЙНЫЯ МАШИНЫ

КОМПАНІИ ЗИНГЕРЪ

Необходимы для домашняго употребленія. Образцовы въ конструкціи и исполненіи. Продаются только въ магаз. Комп. Зингеръ.

Отпускъ машинъ съ платежемъ **отъ 1 рубля въ недѣлю.**

Безплатное обученіе шитью и модным художественнымъ вышивкамъ.

Остерегайтесь поддѣлокъ!

Ручныя машины съ высокимъ рукавомъ во всѣхъ нашихъ магазинахъ отъ 25 руб.

Болѣе 1200 собственныхъ магазиновъ по всей Россіи!

фабричное клеймо которымъ снабжены машины.

ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԶԻՆԳԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Վաճառվում են միայն Ընկերութեան սեփական խանութներում։ Աւելի քան 1200 խանութ Ռուսաստանի Կայսրութեան ամեն քաղաքներում։ Խանութները ճանաչվում են Ռուսաց «Զ» տառը ձևակերպող ցուցանակներով, համաձայն ֆիրմանների մինիստր.—Արդիւնաբեր. և Առևտր. բաժնի հաստատած նկարին։ Զգուշացէք կեղծիքներից։ Մեքենաները տրվում են սկսած շաբաթական 1 ռուբլի վճարից։

25—25

Ցոյցատ «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатня типографскаго Т—ва Гермесъ. Мад. ул. № 16